ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ
ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

ԱՐՎԵՍՏ 10

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հարություն Հակոբյան

2021

ԱՎԱՆԳԱՐԴ ԿԱՄ ԱՎԱՆԳԱՐԴԻՍՏԱԿԱՆ* ՈՃ

Ավանգարդը 20-րդ դարի հզոր գեղարվեստական, մշակութային երևույթ է, որը հատուկ է անցումային շրջափուլերին: Ավանգարդը գեղագիտական պատասխան էր գլոբալիզացման գործընթացներին, գիտատեխնիկական առաջընթացին: Այս մշակույթը դուրս մղեց արվեստի, գեղարվեստական մտածողության ավանդական, դասական ձևերը և, ընդհակառակը, արվեստի կարգավիճակ տվեց այն առարկաներին, որոնք սերտորեն փոխկապակցված են տեխնիկական միջոցների հետ: Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Հոլանդիայի Լեյդեն քաղաքում գեղանկարիչների, քանդակագործների, գծանկարիչների, ճարտարապետների մի խումբ սկսեց պրոպագանդել նոր, խիստ աբստրակտ ոճը, որը հենված էր բացարձակապես ուղիղ գծերի, սևի, սպիտակի և առաջնային գույների վրա:

Ուղղությունները և հոսանքները

Ավանգարդիզմը 20-րդ դարի բուրժուական մշակույթի ճգնաժամի արտահայտությունն է, առաջ է եկել անարխիստական, սուբյեկտիվիստական աշխարհըմբռնումից: 20-րդ դարի առավել բուռն զարգացման տարիներին (1905-1930) նրա հատկանիշները դրսևորվեցին մոդեռնիզմի մի շարք դպրոցներում և հոսանքներում՝

ֆովիզմ,
կուբիզմ,
ֆուտուրիզմ,
էքսպրեսիոնիզմ,
դադաիզմ,
սյուրռեալիզմ ևն:

Միևնույն ժամանակ, արտահայտվեցին 20-րդ դարի մի քանի խոշոր վարպետների ստեղծագործության մեջ, նրանց գեղարվեստական գործունեության այս կամ այն շրջանում: Պոլ Էլյուարը, Բերտոլդ Բրեխտը, Դ. Ռիվերան, Ջեյմս Ջոյսը, Մ. Պրուստը, Պոլ Մոնդրիանը, Սալվադոր Դալին, Պ. Քլեեն, Վ. Վ. Կանդինսկին, Գիոմ Ապոլիները, Պաբլո Պիկասոն հարել են ավանգարդիզմին:

Սալվադոր Դալի

Իսպանացի անվանի սյուրռեալիստ նկարիչ, գրող Սալվադոր Դալին (1904թ. մայիս 11 - 1989թ. հունվար 23) ծնվել է Իսպանիայի Ֆիգուերաս քաղաքում, ուսանել է Մադրիդի Գեղեցիկ արվեստների դպրոցում, ինչն էլ ազդել է նրա մասնագիտական սկզբնական ժամանակաշրջանում կատարած նկարների վրա:

Դալիի արվեստը ծագում է հենց սյուրռեալիստական գեղագիտությունից, որտեղ նա գտել է իրեն ամենամոտիկ մոտիվները: Այն բոլոր սյուժեները, որոնք տեղափոխվում են Դալիի մեկ նկարից մյուսը, բացում են հեղինակի ապրումների աշխարհը, այդ բոլոր սյուժեները գտել են իրենց արտացոլանքը նաև պոեմների և ֆիլմերի մեջ, որոնք Դալին նկարահանում էր Լուի Բյունուելի հետ համատեղ (1928թ., 1930թ.):

* Ավանգարդիզմ, (ֆր.՝ avant-garde, բառացի՝ avant - առջև, garde -Պահազոր)

Հետագայում Դալին մասնագիտական շեղում է կատարել դեպի իտալական կլասիցիզմ: Իր արվեստի մեջ Դալին ներգրավել էր ամենատարբեր աղբյուրներ՝ նիդերլանդական ռեալիզմ, իտալական բարոկկո, աբստրակցիոնիզմ, փոփ-արթ:

Դալիի նկարները բնորոշվում են իրենց մանր գծանկարով և իրատեսական մանրամասնություններով և անշուշտ անբասիր գույներով, որոնք ևս շեշտվում են թափանցիկ ջնարակումով:

Դալին նաև նկարահանել է սյուրռեալիստական ֆիլմեր, տպագրել նկարազարդված գրքեր, զբաղվել ոսկերչությամբ, ձևավորել թատերական բեմեր և հագուստներ: Պահպանվել են նրա բալետային սցենարները և մի շարք գրքեր, որոնցից են «Սալվադոր Դալիի գաղտնի կյանքը» և «Հանճարի օրագիրը»:

Սալվադոր Դալին ներկայացված է ԱՄՆ-ի և Եվրոպայի թանգարաններում՝ Լոնդոն, Բազել, Գլազգո, Փարիզ, Չիկագո, Նյու Յորք, Վաշինգտոն և Ֆիլադելֆիա քաղաքներում:

- *Մի՛ վախեցեք անթերի լինելուց, միևնույն է՝ երբեք չեք հասնի դրան:*
- *Խելքն առանց ձգտման նման է առանց թևերի թռչունի:*
- *Նկարելն արվեստի անկեղծությունն է: Այստեղ սուտ ասվածը գոյություն չունի:*
- *Լինում են օրեր, երբ մտածում եմ, որ կմեռնեմ հաճույքի չափազանց մեծ քանակությունից:*
- *Իմ ազդեցության գաղտնիքն այն է, որ այն միշտ գաղտնիք է:*
- *6 տարեկանում ես ուզում էի խոհարար դառնալ, 7-ում՝ Նապոլեոնը, և այդպես իմ ձգտումները գնալով կատարելագործվում էին դեռ այդ ժամանակներից սկսած:*
- *Իրական նկարիչը նա չէ, ով անընդհատ ոգեշնչվում է, այլ նա, ով ոգեշնչում է մյուսներին:*
- *Ես տարօրինակ չեմ, ես ուղղակի նորմալ չեմ:*
- *Պատադիր չէ, որ հասարակությունն իմանա՝ կատակո՞ւմ եմ, թե՞ լուրջ եմ խոսում, և պետք չէ, որ նույնիսկ ես ինքս իմանամ դա:*
- *Մարդիկ առեղծվածների սիրահար են, և դա է պատճառը, որ սիրում են իմ նկարները:*

Կանդինսկի Վասիլի Վասիլևիչ

Նկարիչ, տեսաբան Վասիլի Կանդինսկին համարվում է աբստրակտ արվեստի հիմնադիրը:

1893 թ-ին ավարտել է Մոսկվայի տնտեսագիտության և իրավունքի համալսարանի իրավաբանության ֆակուլտետը: Սկսել է նկարել 30 տարեկանից: Ապրել է Գերմանիայում, սովորել է Մյունխենում՝ Անտոն Աժբեի մասնավոր դպրոցում, այնուհետև Գեղարվեստի ակադեմիայում և աշակերտել գերմանացի նկարիչ Ֆրանց ֆոն Շտուկին: 1901 թ-ին Կանդինսկին հիմնել է «Ֆալանգ» գեղարվեստական հաստատությունը, նաև դպրոցը, որտեղ դասավանդել է: 1900 թ-ից մասնակցել է մոսկովյան նկարիչների խմբակցության «Բուբնովի վալետ» գեղարվեստական հաստատության ցուցահանդեսներին: Կանդինսկին մշակել է գեղանկարչության մեջ գույնի ռիթմիկ օգտագործման նորարարական սկզբունքներ, որոնք աստիճանաբար դուրս են մղել իրական կյանքի ճշմարիտ պատկերները: Նրա գեղարվեստական որոնումները հանգել են «մաքուր» գեղանկարչությանը, «ոգու ինքնաարտահայտմանն ու ինքնազարգացմանը»:

1911 թ-ին մի շարք էքսպրեսիոնիստ նկարիչների հետ Կանդինսկին Մյունխենում ստեղծել է «Կապույտ հեծյալ» խմբավորումը, բացել իր առաջին ցուցահանդեսը: 1914 թ-ին նկարիչը վերադարձել է Մոսկվա, ստեղծել ռեալիստական և կիսաաբստրակտ գործեր, հիմնականում՝ բնանկարներ: Կանդինսկին Պետրոգրադի (այժմ՝ Սանկտ Պետերբուրգ) գեղանկարչական մշակույթի թանգարանի և Մոսկվայի գեղարվեստական մշակույթի ինստիտուտի հիմնադիրներից էր, Ռուսաստանի գեղարվեստական գիտությունների ակադեմիայի փոխնախագահը:

1921 թ-ին նկարիչը կրկին ապրել է Գերմանիայում. դասավանդել է «Բաուհաուզ» դպրոցում (1922 թ-ից՝ պրոֆեսոր): 1920-ական թվականներին Կանդինսկին աբստրակտ արվեստի հանրաճանաչ նկարիչներից էր: 1933 թ-ից հաստատվել է Փարիզում: Վերջին շրջանի լավագույն աշխատանքներից են՝ «Կոմպոզիցիա IX» (1936 թ.), «Երկնակապույտ» (1940 թ.), «Տարբեր եղելություններ» (1941 թ.), «Վերջին աքվարելը» (1944 թ.) և այլն:

Կանդինսկին գրել է բազմաթիվ աշխատություններ և տեսական հոդվածներ:





Պաբլո Պիկասո



Պաբլո Դիեգո Խոսե Ֆրանցիսկո դե Պաուլա Խուան Նեպոմուսենո Մարիա դե լոս Ռեմեդիոս Կրիսպին Կրիսպինյանո դե լա Սանտիսիմա Տրինիդադ Ռուիս Պիկասո– այս անունը ստացավ ապագա հանճարը մկրտության ժամանակ՝ իսպանական ավանդույթի համաձայն, ըստ որի՝ մկրտվող երեխային կնքում էին ընտանիքի նախնիների և պահապան սրբերի անուններով:

Հետագայում Պաբլոն վերցրեց մոր հայրական ազգանունը՝ Պիկասո, որով էլ հավերժորեն մտավ գեղարվեստի պատմության մեջ՝ որպես բոլոր ժամանակների ամենատաղանդավոր նկարիչներից մեկը:

Պաբլոն ծնվել է 1881 թ.՝ Անդալուզիայում: Հայրը նկարիչ էր և նրա առաջին ուսուցիչը: 7 տարեկանից սկսում է նկարել: Իսկ 13 տարեկանում արդեն այնքան վարժ և լավ էր նկարում, որ հայրն իր նկարչական բոլոր գործիքները նվիրում է նրան և ինքն էլ դադարում նկարել:

Պաբլոն հենց այդ ժամանակ էլ ընդունվում է Բարսելոնայի Արվեստների ակադեմիա, 3 տարի անց տեղափոխվում Մադրիդ: Այստեղ նա ուսումնասիրում է իսպանացի նկարիչների ստեղծագործական տեխնիկան և մեթոդները:

Պիկասո. «Կապույտ» շրջան. 1901-1904

Ընկերոջ մահվան թեմայով և դրանից ազդված՝ Պիկասոն մի շարք նկարներ է անում, որոնք արվեստաբանները կոչում են Պիկասոյի ստեղծագործության «կապույտ» շրջան:

Կապույտի և մոխրագույնի երանգների գերակայությունն այդ շրջանի նկարներում բացատրվում է նաև շատ պարզ և նյութական. Պիկասոն Փարիզում շատ լուրջ ֆինանսական խնդիրներ ուներ և շատ գույներ գնելու փող չուներ:

Մոնմարտրն ու Պիկասոն. «Վարդագույն» շրջան. 1904-1906

Մոնմարտրյան բլուրի հիմքերում դարասկզբին կրկես էր գործում: Հենց այդ կրկեսի դերասաններն էլ Պիկասոյի ոգեշնչման աղբյուրներն էին: 1904-1906 թթ. մի շարք նկարներ են արվում, որոնցից ամենահայտնին «Աղջիկը գնդի վրա» կտավն է: Սա արդեն «վարդագույն» շրջանն էր:

«Աֆրիկյան» շրջան. 1907-1909

1906 թ. Պիկասոն աշխատում էր ամերիկացի գրող, Գերտրուդ Սթայնի դիմանկարի վրա: Այս կտավը նկարիչը մոտ 80 անգամ փոխել է, նորից է նկարել: Հետագայում Սթայնը պատմում է, որ հոգնելով և բարկանալով իր ուզածը չստանալուց՝ Պիկասոն ասել է իրեն. «Ես դադարում եմ Ձեզ տեսնել հենց նայում եմ Ձեզ»:

Սա Պիկասոյի ստեղծագործության մեջ կարևոր և շրջադարձային պահ էր: Նա հասկացավ, որ պարզ դիմանկարային ռեալիստիկ արտատպումներն իրեն չեն բավարարում, իրեն ուրիշ բան է պետք: Նա սկսեց ֆորման, ձևը ընկալել որպես առանձին արվեստ և արվեստաստեղծ միջոց: Նրան այդ շրջանում գերում էր աֆրիկյան մշակույթը՝ դիմակները, քանդակները, որոնք իր կարծիքով առանձնահատուկ մոգականություն ունեին:

Այս «աֆրիկյան» փուլն էլ Պիկասոյի մտածողության և ստեղծագործության յուրահատկության հիմքը դրեց:

Կուբիզմ. 1909-1917

28 տարեկանում նկարում է «Ավինյոնի աղջիկները» կտավը: Այս նկարով սկսվում է Պիկասսոյի արվեստի կուբիզմի շրջանը:

Նոր աշխատանքները գնալով ավելի աբստրակտ էին դառնում. կուբիզմն ու աբստրատցիոնիզմը միահյուսելով նոր ու արտասովոր արվեստ էին ծնում:

Նրա կյանքում կարևոր շրջադարձ էր 1925 թ. արված «Պար» կտավը, որով Պիկասոյի ստեղծագործության մեջ սկզբնավորվեց սյուրռեալիստական փուլը:

> ***Այն ինչ կարող ես պատկերացնել, իրական է:***
> *Պաբլո Պիկասո*

Պարողների աղավաղված պատկերները, առաջին հայացքից անհասկանալի դետալներն ընդհանուր առմամբ թողնում են ճնշող տպավորություն և միևնույն ժամանակ հիացմունքի զգացողություն ստեղծում:

1930-ականներից Պիկասոն սկսում է լրջորեն զբաղվել քանդակագործությամբ: Ստեղծվում են «Պառկած կինը», «Տղամարդը փնջով» քանդակները:

Պատերազմն ու Պիկասոն

Իսպանական հեղափոխության և երկրորդ համաշխարհայինի տարիներին Պիկասոն Փարիզում էր: 1937 թ. նա մեկ ամսում, Իսպանիայի կառավարության պատվերով ստեղծում է «Գեռնիկա» կտավը սև-սպիտակ գույների համադրությամբ, Փարիզում կայանալիք Համաշխարհային ցուցադրության համար:

Իսպանիայի հյուսիսում գտնվող մի փոքրիկ քաղաք ամբողջությամբ ավերվել էր 1937 թ. գերմանական զորքերի ռմբակոծությունների պատճառով: Այս ազգային ողբերգությունը Պիկասոն պատկերել է սպանված զինվորականի, ողբացող մոր, կտոր-կտոր արված մարդկանց պատկերներով: Պատերազմի խորհրդանիշը նկարչի մոտ Մինոտավրոսի ցուլն է՝ մեծ և անտարբեր աչքերով: Պատերազմական թեմաներով ստեղծվել են մի շարք այլ կտավներ:

Հետպատերազմյան շրջան

Կյանքի ուրախ գույները և ուրախ, գունեղ թեմաները նորից են հայտվում Պիկասոյի կտավներում պատերազմից հետո: Այդ շրջանում Պիկասոյի ամենասիրելի թեման հին հունական դիցաբանությունն էր: Պիկասոն այդ թեմաներով ոչ միայն նկարում էր, այլև քանդակում էր և կերամիկական իրեր նկարազարդում:

1949 թ. խաղաղության կողմնակիցների Համաշխարհային Կոնգրեսի համար Պիկասոն նկարում է «Խաղաղության աղավնի» կտավը:

Պիկասոն մահացել է 1973 թ. ապրիլի 8-ին՝ 92 տարեկանում: Իր ստեղծագործական երկար կյանքի ընթացքում նկարիչը հասցրել է կերտել 80 հազար կտավ, 1000-ից ավել քանդակներ:

Գիյոմ Ապոլիներ

Իսկական անունը Վիլհելմ Ալբերտ Վլադիմիր Ալեքսանդր Ապոլիանարի Վոնժ Կոստրովիցկի, ֆրանսիացի բանաստեղծ, 20-րդ դարի եվրոպական ավանգարդի ամենավառ դեմքերից մեկը: Ծագումով լեհ է:

Ապոլիները մանկությունն անց է կացրել Իտալիայում, սովորել Մոնակոյի, Կաննի և Նիսի քոլեջներում, իսկ 1899 թվականին՝ մոր հետ տեղափոխվել Փարիզ:

Որպես գրական կեղծանուն՝ Կոստրովիցկին ընտրեց իր երկու ֆրանսիական անունների տարբերակները՝ Վիլհելմ և Ապոլիներ: Ընկերական հարաբերությունների մեջ էր նկարիչներ Պաբլո Պիկասոյի, Անդրե Դերենի, Ֆրանսիս Պիկաբիայի, Մորիս դը Վլամինկի և Անրի Ռուսոյի հետ: 1917 թվականի գարնանը Դյագիլևի և Կոկտոյի անձնական խնդրանքով Ապոլիները հանդես եկավ ապագայի արվեստի մասին մանիֆեստով, որը կրում էր «Նոր ոգի» անվանումը և 2 տասնամյակ ուղղորդում էր Ֆրանսիայի երաժշտական զարգացումը:

Գործունեություն

1910-ականների վերջերին Ապոլիների շուրջ հավաքվեց երիտասարդ սյուրռեալիստ բանաստեղծների սերունդ՝ Անդրե Բրետոն, Լուի Արագոն, Ժան Կոկտո: «Սյուրռեալիզմ» տերմինն առաջարկել է հենց Ապոլիները:

ԱՎԱՆԳԱՐԴԸ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Արվո Պյարտ



Էստոնացի կոմպոզիտոր, համարվում է ներկայումս ստեղծագործող ժամանակակից երաժշտության ամենանշանակալի կոմպոզիտորներից մեկը: Ստեղծագործում է դասական և հոգևոր երաժշտության ոլորտում: 1970-ական թվականների վերջերից ստեղծագործում է մինիմալիստական երաժշտության ոճում: Նրա երաժշտությանը բնորոշ է ինքնատիպ երգաստեղծման տեխնիկան՝ տինտինաբուլին՝ հայտնագործված հենց իր կողմից: Նրա երաժշտությունը մասամբ ներշնչված է Գրիգորյան երգեցողությունից:

1957 թվականին ավարտել է Տալլինի կոնսերվատորիայի կոմպոզիցիայի բաժինը՝ Հ. Էյլերի ղեկավարությամբ: 1968 թվականին աշխատել է Էստոնական ռադիոյում՝ որպես ձայնային ռեժիսոր: 1964 թվականից Պյարտն իր ստեղծագործություններում առաջին անգամ կիրառել է կոլաժի տեխնիկան: Մոտավորապես նույն ժամանակ նրա երաժշտության մեջ սկսում են նկատվել կրոնական եղանակներ:

Ստեղծագործությունը

Թեև Պյարտը փորձարարություն է արել տարբեր տեխնիկաներով ու ոճային մոդելներով, որոնցից են իզոմետրիան, մինիմալիզմը, սերիականությունը, նեոդասականությունն ու կոլաժը, սոնորիկան և այլն, նա ամբողջությամբ չի հարել ավանգարդ դպրոցներից ոչ մեկին: Կոմպոզիտորն իր ոճն այլաբանորեն բնորոշում է որպես tintinnabuli՝ բառացի՝ "զանգակներ" (ակնարկվում են եկեղեցական զանգերը):

Արտո Թունջբոյաջյան

Ավանգարդ ֆոլկ ոճում ստեղծագործող և կատարող ճանաչված հայ երգիչ, մուլտիինստրումենտալիստ, աշխարհահռչակ «Armenian Navy Band» խմբի ղեկավար, «Night Ark» հայտնի ամերիկահայ ջազ-քառյակի հիմնադիր, երաժշտական «ՍերԱրտ» նախագծի համահեղինակ (Սերժ Թանգյանի հետ համատեղ): 2006-ին Armenian Navy Band-ի հետ արժանացել է BBC Radio 3 Awards for World Music մրցանակաբաշխության՝ հանդիսատեսի համակրանքի մրցանակի: 2011-ին արժանացել է «Գրեմմի» մրցանակի: Թուրքահայ կոմպոզիտոր Օննո Թունջի կրտսեր եղբայրն է:

Բյորկ Գվյուդմյունդսդոուտիր (իսլ՝ Björk Guðmundsdóttir)

Իսլանդացի երգչուհի, դերասանուհի, երաժիշտ, կոմպոզիտոր և երգերի հեղինակ, շատ մրցանակների դափնեկիր:

Երգերը պատկանում են տարբեր ոճերի, այդ թվում ալտերնատիվ ռոք, փանք, էլեկտրոնիկա, ինդի-փոփ, թրիփ-հոփ, modern classic, IDM: Բյորկն իր սոլո կարիերան սկսել է 1993 թվականից: Նրա առաջին՝ Debut ալբոմը բաղկացած էր հիմնականում պարային էլեկտրոնային երաժշտությունից, հաուս, ջազ, թրիփ-հոփ: Այժմ, Բյորկը ստեղծել է սեփական էլեկտրոնային երաժշտական ոճ, որն ներառում է պարային, ռոք, ջազ, էլեկտրոնիկ և ավանգարդ երաժշտության ասպեկտներ:

Ժան Միշել Ժար (Jean Michel Jarre)

Ծնվել է Ֆրանսիայի Լիոն քաղաքում: Էլեկտրոնային երաժշտության հիմնադիրներից է: Նրա ստեղծագործությունները դասում են էլեկտրոնային, ամբիենթ, նյու էյջ երաժշտական ոճերին: Մինչև այժմ Ժան Միշել Ժառը թողարկել է 34 ալբոմ և ներկայացրել 141 համերգ աշխարհի բոլոր մայրցամաքներում:

ՀԱՄԵՐԳՆԵՐ

1979 - Place De La Concorde («Կոնկորդ հրապարակ»)
Ներկաներ՝ 1.000.000
1981 թ., հոկտեմբերի 21-22 - Պեկին, Չինաստան
Ներկաներ՝ 218.000
1986 - Houston - A City In Concert («Հյուսթոն. Քաղաքը համերգում»)
Ներկաներ՝ 1.350.000
1986 - Rendez-Vous in Lyon («Հանդիպում Լիոնում») (Rendez-Vous in Lyon)
Ներկաներ՝ 800.000
1988 - Destination Docklands («Հանդիպման վայրը՝ Docklands»)
Ներկաներ՝ 1.000.000 (400.000-ը տոմսերով մնացածը անվճար)
1990 - Paris - La Défense
Ներկաներ՝ 2.500.000 Համերգը տեղի ունեցավ Փարիզի կենտրոնում գտնվող La Défense թաղամասում: Ժառին նվագակցում էր մետաղյա հարվածային գործիքներ նվագող Amoco Renegades աշխարհահռչակ խումբը: Այս համերգի շնորհիվ Ժան Միշել Ժառը երրորդ անգամ է գրանցվեց Գինեսի ռեկորդների գրքում:

ԱՎԱՆԳԱՐԴԸ ԵՎ ՆՈՐԱՁԵՎՈՒԹՅՈՒՆԸ

Ավանգարդ ոճը նորաձևության ուղղություն է, որը բնութագրվում է անսովոր ձևերով, պայծառ անսպասելի պարագաների օգտագործմամբ:

Որպես հագուստի ոճ, ավանգարդը վառ արտահայտվեց 20-րդ դարի 60-ական թվականներին: Շատ պայծառ տաղանդներ հնարավորություն ունեցան արտահայտվելու ավանգարդ ոճում, դա մարդու ապստամբ ոգին ցուցադրելու լավագույն ձևն էր: Ավանգարդ ոճը կարելի է գտնել գրեթե բոլոր արվեստներում, երիտասարդ ստեղծագործողներն ամեն կերպ փորձում են ինքնադրսևորվել, և դա փորձարարական ոճ է, որը թույլ է տալիս երևակայության լիարժեք թռիչք:

Ոճը նշանները

Նորաձևության ավանգարդ ոճին բնորոշ են մի շարք առանձնահատկություններ՝ անսովոր նյութերի և հյուսվածքների, ձևերի, գծերի, գույների օգտագործման և համադրություն, ծավալային երկրաչափական ձևավորում և այլ ոչ ստանդարտ դրսևորումներ, ասիմետրիա, գրավիչ պարագաների օգտագործում, հագուստի ոչ ավանդական ձևեր:

Ցանկացած սովորական բան կարող է վերածվել ավանգարդ ոճի, եթե այն պատրաստված է անսովոր նյութից, կամ ունենալ արտասովոր գունավոր համադրություններ: Նման հագուստով անհնար է կորել ամբոխի մեջ, նույնիսկ եթե դա ամենօրյա հագուստ է:

Ավանգարդ ոճը, առաջին հերթին, կապվում է Պիեռ Կարդենի անվան հետ:

Աշխարհի ամենահայտնի հագուստի դիզայներներից մեկը՝ Պիեռ Կարդենը կարող է համարվել նորաձևության այս ոճի նախահայրը: Նրա լեգենդար տիեզերական հավաքածուն, հագեցած է ավանգարդի ոգով: Շատ հաճախ իր աշխատանքում դիզայները օգտագործում է փորձարարական մոտեցում, նա փորձում է համախմբել անհամատեղելին: Նրա ֆանտաստիկ հավաքածուն այսօր համարվում է ավանգարդ ոճի հիմք: Նրա առաջարկած վառ գույները, արդեն ծանոթ միջոցները նորովի ներկայացնելու միտումը դիզայներն ակտիվորեն օգտագործում է իր աշխատանքներում:

Նորաձևության աշխարհում գրեթե չկան դիզայներներ, որոնք զբաղվում են բացառապես ավանգարդ ուղղությամբ: Շատերն ուղղակի ժամանակ առ ժամանակ ստեղծում են խիզախ նորարարական հավաքածուներ:

Այսօր նորաձևությունը, յուրահատուկ զգեստ ստեղծելու համար, հաճախ է օգտվում ավանգարդիստական ոճից: Հագուստի այս ոճը, նույնիսկ ընդգրկված է նորաձևության աշխարհում առաջատար դպրոցներից մեկի՝ Սան Ֆրանցիսկոյի նորաձևության դպրոցի առարկաների ցանկում:

Ավանգարդ ոճը ոչ բոլորի համար է, կամ ավելի շուտ, ասվում է, որ այս ոճը պարզապես հարմար չէ փողոցային նորաձևության համար: Բայց դա ստեղծագործ մարդկանց համար բավականին ընդունելի է դառնում, երբ այն կրում են հանդիսավոր միջոցառումների ժամանակ: Հագուստը ավանգարդի ոճում ոչ միայն պայծառ մանրամասների կույտ է, այլև խորը գաղտնի իմաստ ունի, որը նախատեսված է մարդու ներքին աշխարհը բացահայտելու համար:

Ավանգարդ ոճը ենթադրում է նաև տարբեր հավելումներ՝ աքսեսուարներ, դիմահարդարում և սանրվածք:

Ավանգարդ ոճի նորաձևությունն իր մանրամասներով և տարօրինակ համադրություններով

ներկայացնում է մարդու ազատությունը: Բայց սա ոչ մի կերպ չի կարելի համարել քաոսային: Արդյունքում պատկերը պետք է նրբագեղ լինի, թեև անսովոր է:

ԱՎԱՆԳԱՐԴ ՈՃԸ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԻԶԱՅՆԻ ՄԵՋ

Ավանգարդը ինտերիերի ձևավորման գեղարվեստական ճարտարապետական ոճ է, որը ծնվել է երիտասարդության հեղափոխական տրամադրությունների արդյունքում: Այն դասականի հակապատկերն է, հատուկ է ոչ ստանդարտ, ինքնատիպ մտածողություն ունեցող, ազատասեր, անկախ ստեղծագործող անհատներին: Այս ոճի շեշտադրությունը միջավայրային դիզայնի պարագայում գույնի վրա է: Ավանգարդը հանդուրժում է գույների հաճախ անհարիր խառնուրդ, որը չպետք է անցնի պայծառությունից դեպի անճաշակություն: Այս ոճով ձևավորված միջավայրը զուրկ է պաստառներից, քանի որ պատերը ոճավորված են վրձնով և ներկով:Հակադիր համադրությունները ավանգարդ ոճի հիմնական հնարքն են: Կահույքը բաղկացած է յուրօրինակ տարրերից, որը նույնպես գույներով կարող է հակադրվել միջավայրի հարթ մակերեսների գունային երանգներին: Ավանգարդ ոճը միջավայրում ձևավորում է ոչ միայն բնակելի տարածք, այլ նաև յուրօրինակ և անկրկնելի արվեստի գործ: Ավանգարդ ոճը միջավայրում մի փորձարարություն է, որը մինչև ոճավորման վերջին պահը կարող է անհասկանալի լինել, երբ քաոսը վեր է ածվում ավարտուն հորինվածքի:

19-րդ դարի 60-ական թթ. դիզայնի ոլորտում լուրջ փոփոխություններ գրանցվեցին: Մասնագետները չէին ուզում իրենց ստեղծագործությունները դիտարկել արդյունաբերության ֆոնի վրա: Առարկայի գործառույթի հիմնախնդիրը տեխնիկական ոլորտից փոխադրվեց խորհրդանշականի և սոցիալականի տարածք:

Նոր ուղղությունը ձևավորվեց որպես երիտասարդական ենթամշակույթ: Ծագեցին նոր մշակութային ուղղություններ, ինչպիսին փոփ արտն է: Փոփ արտի ներկայացուցիչները ձգտում էին ստեղծել հակամշակույթ՝ առաջին պլան մղելով սպառողի քաղաքակրթությունը, փառաբանելով առօրյա պարզունակ առարկաները, որոնք թողարկվում էին միլիոններով: Նրանք սնվում էին «ցածր մշակույթից»: Նրանց ոգեշնչում էին գովազդները, պիտակները, զանգվածային տեղեկատվությունը:

Առաջադրանքներ

1" Ընտրե՛ք ներկայացված երաժիշտներից որևէ մեկի ստեղծագործությունը և համդրի՛ Կադինսկու, Դալիի կամ Պիկասոյի կտավների հետ: Փորձի՛ր տեսնել երաժշտության գույնը:

2" Ստեղծե՛ք ավագարդ ոճի երիտասարդական հագուստ:

3" Նախագծե՛ք ավագարդ ոճի ինտերիեր:

ՌԵՏՐՈ

Բառը ծագում է լատիներեն retro նախածանցից, որը նշանակում է հետընթաց, կամ անցյալ, «միտված դեպի անցյալը»:

Ռետրոն լայն հասկացություն է, և կարող է ընդգրկել բավական մեծ ժամանակային սահմաններ: Ռետրոն «անցած դարաշրջանի շունչն է»:

Ռետրո ոճը ընդօրինակում, կամ գիտակցաբար անդրադառնում է պատմական անցյալի ապրելակերպին, սովորություններին, արվեստի ձևերին, երաժշտությանը կամ նորաձևությանը:

Ռետրո ոճը վերաբերում է անցյալի հատկությունները կրող նոր իրերին, հիմնականում արտահայտված է արդյունաբերական հեղափոխությունից հետո արտադրված ապրանքների, նորաձևության և արվեստի վերաիմաստավորմամբ:

Ռետրո ոճի հիմքում դրված է «ամեն ինչի նորը, լավ մոռացված հինն է» գաղափարախոսությունը:

Չնայած որ ռետրո ոճը հայտնվել է 20-րդ դարի 50-ական թվականներին, այնուամենայնիվ այն իր մոտեցումներով, կարծես թե շարունակում է դասական ոճը:

Ռետրո ոճը բարձր է գնահատվում ստեղագործ մարդկանց ոլորտում, որոնք գերադասելով համարձակ լուծումներ, նաև գնահատում են անցյալի ռոմանտիզմը:

Ռետրոն մշակութային առումով նշանավորեց Շառլ դը Գոլի և Երկրորդ համաշխարհային պատերազմում Ֆրանսիայի դերի վերարժևորմամբ: 1970-ականների ֆրանսիական ռետրոն արտահայվեց ֆիլմերում և վեպերում, վերագնահատելով ֆրանսիացի խաղաղ բնակիչների վարքագիծը նացիստական օկուպացիայի օրերին: Ռետրո եզրույթը սկսեցին կիրառել ֆրանսիական նորաձևության նկատմամբ, որն արտահայտում էր այդ պատմական ժամանակահատվածի նոստալգիկ հիշողությունը:

Կարճ ժամանակ անց նորաձևության և մշակույթի ուղղությունները ներկայացնող մամուլը, սկսեց կիրառել անգլերեն ռետրո եզրույթը, որը մեկնաբանվում է որպես անցյալի նորաձև վերածնունդ: Վերածննդի ավելի ավանդական ընկալումից տարբերվող «ռետրո»-ն առաջարկում է ոչ վաղ անցյալի նկատմամբ կես հեգնական, կես կարոտ վերարտադրություն:

Ռետրոն սովորաբար ներկայացնում է ընթացիկ պահից 40-80 տարի առաջ ընկած տասնամյակները, ոչ վաղ անցյալի միջավայրը, և նոստալգիկ վերաբերմունքը այդ ժամանակների նկատմամբ: «Կարոտի ժամանակների», անցյալի իրերի, մարդկանց և իրավիճակների ջերմ, թեթև հիշողությունների վերարտադրությունը, սկսեց արտահայտվել և տարածվել արվեստի տարբեր տեսակներում՝ նորաձևության, տպագրության և դիզայնի մեջ:

Ռետրո առարկաները պարտադիր չէ, որ հին լինեն, դրանք կարող են լինել բոլորովին նոր, բայց պետք է պատրաստվեն այն ժամանակի կամ իրի ոճով, որը նրանք փորձում են կրկնօրինակել:

«Ամեն նոր լավ բան մոռացված հինն է». Սա է երաժշտության, հագուստի, նաև բնակարանի ձևավորման ռետրո միտման կարգախոսը: Մարդկանց հրապուրում են այն ժամանակները, երբ ապրում էին Մերիլին Մոնրոն, Էլվիս Փրեսլին և պատմություն կերտած այդ շրջանի այլ ներկայացուցիչներ:

ՎԻՆՏԱԺ

Այս գեղեցիկ և բազմանշանակ եզրույթը ծագում է ֆրանսերեն Vintage բառից, որը նշանակում է «գինու հնեցում»: Վինտաժը բնութագրում է XX դարի նորաձևության ոճը, որը XXI դարում առավել լայն տարածում գտավ: Գոյություն ունի կարծիք, որ ռետրո իրերը դրանք 40-80 տարեկան իրերն են, իսկ վինտաժային իրերը ավելի երիտասարդ են' 20-30տ": Վինտաժը ենթադրում է ժամանակային սահմաններ (1920-1960թթ), սակայն այստեղ կարևորը, ոչ թե ժամանակն է, այլ իրերի տրենդային լինելը: Ռետրոյի և վինտաժի գլխավոր տարբերությունը կայանում է նրանում, որ ռետրո կարող է լինել անցած դարաշրջանին պատկանող ցանկացած իր, իսկ վինտաժային' միայն բացառիկ իրերը (ի դեպ միայն նրանք, որոնք կրկին օգտագործվում են):

Եթե անդրադառնանք նորաձևությանը, ապա որպես կանոն վինտաժային իրերը պետք է պատրաստված լինեն միայն հայտնի դիզայներական տներում և ունենան որոշակի արժեք: Նման թանկարժեք իրեր իրենց կարող են թույլ տալ միայն, օրինակ՝ Հոլիվուդյան աստղերը կամ մեծահարուստ կանայք, մինչդեռ ռետրո տեսք կարող է ստանալ յուրաքանչյուրը, օգտագործելով օրինակ, իր տատիկի պահարանում պահված հին իրերը: Վինտաժը պաթոսային ռետրոն է, որը խիստ սահմանափակ է իր ժամանակային եզրերում:

Շատ հոլիվուդյան աստղեր վինտաժային իրերի հավաքածուներ ունեն, որոնց թվում են Դիտա ֆոն Տիզը, Ջուլիա Ռոբերտսը, Դրյու Բերիմորը, Ռիզ Ուիզերսփունը, Ռեյչլ Զոուին, և այլոք: Շատ անգամ, որևէ մրցանակաբաշխության ժամանակ նրանց կրած այս կամ այն զգեստը, հիշեցնում է 1940-ականների ոճը, և հնարավոր է, որ դա հենց այդ թվականներին կարված հագուստ է:

ՌԵՏՐՈ ԱՐՎԵՍՏ



1950-ականների դարաշրջանի պաստառ՝ փոփ-արտ ոճով, այն ոճը, որի վրա հիմնված է ռետրո արվեստը:

Ոճը, որն այժմ կոչվում է «ռետրո արվեստ», փոփ-արվեստի ժանր է, որը մշակվել է 1940-ականներից մինչև 1960-ական թվականները՝ ի պատասխան համարձակ, գրավիչ գրաֆիկայի անհրաժեշտության, որը հեշտությամբ վերարտադրվում էր այն ժամանակվա հիմնական կենտրոններում առկա պարզ տպագրության վրա:

Ռետրո գովազդային արվեստը ժողովրդականության վերածնունդ է ապրել, քանի որ տարբերվում է ժամանակակից համակարգչային ոճից:

Հատուկ ոճավորման, ռետրո փոփ-արտ կերպարի ամենահայտնի օրինակը Ward Cleaver ոճով J. R. "Bob" Dobbs-esque պատկերակի առավել ընդհանրացված ձևն է, որը լայնորեն խաղարկվել է, պատճենվել և պարոդիայի ենթարկվել:

ԳՐԱՖԻԿԱԿԱՆ ԴԻԶԱՅՆ, ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՓԱԹԵԹԱՎՈՐՈՒՄ



«Ռետրո» բառի օգտագործումից շատ առաջ գրաֆիկական դիզայնը հղում էր կատարում ավելի վաղ գրաֆիկական պատկերներին: Քսաներորդ դարի սկզբին գոթական, բարոկկո և ռոկոկո մոտիվները օգտագործվում էին նոր ապրանքներ գովազգելու համար:

20-րդ դարի տպագրությունը հաճախ է ազդվել կլասիցիզմից, վաղ փայտափորագրությունից: 1960 -ականներին լուսանկարչական մոնտաժի տեխնիկայի ներդրումը թույլ տվեց տպագրիչներին տարբեր ոճերի և չափերի ընտրության և դասավորության մեջ ավելի մեծ ճկունություն կիրառել: Հին մշակույթների ազդեցության տակ ստեղծվում էին նոր տառատեսակներ և գրաֆիկական ձևեր: Դասական գեղարվեստական այս ոճերը օգտագործվում են նաև սննդամթերքի և կենցաղային ապրանքների գովզդի և փաթեթավորման մեջ՝ հղում կատարելով մանկության հիշողություններին և կարոտախտային իդեալներին:

Վերջին տարիներին լոգոների ձևավորման մեջ ևս, բավականին հաճախ են անդրադառնում ռետրո պատկերանշաններին: Տարբեր բրենդային կազմակերպություններ ներառում են ռետրո լոգոների դիզայնը՝ ընդգծելու համար իրենց ապրանքանիշի մաքուր, դասական լինելը, ջերմ հիշողություններ արթնացնելով ոչ վաղ անցյալից:

ԻՆՏԵՐԻԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ

Միջավայրի ոճավորումը այս ոճով ակնկալում է վառ և հագեցած գույների ներդաշնակություն, միջավայրի բոլոր տարրերը պետք է լինեն ճաշակով և զսպված: Այս ոճը ինքնատիպ է, քանի որ արտահայտում է անցյալը ներկայում, իսկ անցյալի ընկալունակությունը յուրաքանչյուրի մոտ յուրովի է: Ռետրո ոճի կիրառման դեպքում ցանկալի է ոչ միայն հնաոճ կահույքի առկայություն, այլ նաև ունենալ որոշակի յուրահատկություն: Ռետրո ոճը սիրում է յուրաքանչյուր տարրի փոքր-ինչ ժամանակակից ոճավորում: Այս ոճը նախագծելիս հնարավոր է նորաոճ կահույքի կիրառում, կարևորն այն է, որ նրանք արտացոլեն անցյալը: Տարբեր տասնամյակներում նույն ոճը տարբեր կերպ է արտահայտվել: Ռետրո ոճին բնորոշ են դեղին և կանաչ գույները, ինչպես նաև աղյուսաձև շարված պատերի հատվածները: Որպես հատակ՝ հաճախ օգտագործվում է արհեստական մանրահատակ հիշեցնող բաց

գույնի բնական փայտը: Հատակը ձևավորելիս կիրառվում է նաև կլոր գորգը: Այս ոճի կարևորագույն գաղափարն է յուրահատկությունը: Չկան սահմանափակող կանոններ, կարելի է օգտագործել հնաոճ կահույք, ոչ շատ բարձր խոշոր կահույք՝ անկյունային լուծումներով: Ռետրո ոճի ինտերիերը պետք է հետաքրքրություն առաջացնի: Այս միջավայրը ավելի շատ հիշեցնում է արվեստանոց և ազատություն: Կիրառելով ռետրո ոճը՝ հաճախ կարելի է նախագծել այնպիսի միջավայր, որը հիշեցնի փոքրիկ թանգարան, որտեղ ամենուր ամենաանհավանական իրերն են: Ռետրո ոճին բնորոշ են ծաղկային նախշերով թեթև վարագույրները, բազմաթիվ գրքերի առկայությունը, ինչպես նաև լուսանկարներ, անհավանական տեսքով բարձր լուսատու սարքեր, վառ գույների սպասք, բամբակյա կամ բնական սփռոցներ՝ զոլավոր, երբեմն էլ պտտավոր: Գորգերը երկրաչափական նախշերով են, չուգունե արտադրանք, կլոր ժամացույցներ, տարօրինակ ծաղկամաններ, ինչպես նաև սենյակային ծաղկային ձևավորում:

ՆՈՐԱՁԵՎՈՒԹՅՈՒՆ

Նորաձեության աշխարհում ռետրո ոճը չի կորցնում իր արդիականությունը արդեն երկար տարիներ, ոգեշնչելով դիզայներներին:

Ժամանակակից ռետրո նորաձևությունը հատուկ ուղղություն է, որով անցյալի և ժամանակակից տարրերը ներդաշնակորեն համակցվում են: Սա շատ գրավիչ ոճ է, որը ներառում է գույների պայծառությունը, բարդ ուրվանկարները եւ ռոմանտիկ տրամադրությունները:

Պետք է նշել, որ ռետրոն ամենօրյա ոճ չէ, թեև դրա տարրերը առօրյա հագուստի մեջ առկա են:

Ռետրո ոճ ստանալու համար նախ պետք է ընտրել որոշակի ժամանակահատված, որը պետք է լինի 20-րդ դարի 60-ական թվականներից հետո, այլապես դա կլինի վինտաժ, և առաջնորդվել այդ տարիներին հատուկ միտումներով: Ռետրո ոճի համար կարևոր նախապայման են աքսեսուարները, որոնք առավել, քան հագուստը, հաղորդում են տվյալ ժամանակահատվածի նորաձևության շունչը:

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

Ռետրո երաժշտությունը իր պատմության մեջ զարգացման մի քանի փուլ է անցել, ըստ այդմ՝ ենթարկվել է փոփոխման:

Մեր ժամանակներում ռետրո երաժշտությանը ծանոթ են հին, որակյալ երաժշտություն նախընտրող մարդիկ, կամ էլ էլեկտրոնային երաժշտությամբ զբաղվող DJ-ներ, որոնք աշխատում են համակարգչային տարբերակով: Նման երգերի մեջ բառերի ու ոճի հիմքում ընկած է ինչ-որ մի ռետրո կատարում:

Հայկական ռետրոն նույնպես կենդանի է, քանի որ ժամանակին ունեցել է երաժշտական մեծ վարպետներ: Ժողովուրդը շարունակում է լսել ու սիրել հայկական ռետրոն, քանի որ այդ երգերը գրել են մեծ վարպետներ՝ Խաչատուր Ավետիսյանը, Կոնստանտին Օրբելյանը, Առնո Բաբաջանյանը և շատ այլ սիրելի երաժիշտներ:

ՄԵՔԵՆԱՆԵՐ

Ռետրո մեքենաները անցյալ դարից ոչ միայն շարժման միջոց չեն, դրանք մեր քաղաքակրթության զարգացման պատմության կարևոր բաղադրիչն են: Բացի այդ, հին մեքենաներից շատերը ավտոմոբիլային արվեստի եզակի և հեղինակային աշխատանքներ են: Այժմ դրանք ոչ պակաս հիացմունք են առաջացնում:

Առաջադրանքներ

1" Թերթե՛ք նորաձեւության պատմության էջերը եւ պարզեք, թե որոնք են այս կամ այն ժամանակահատվածին բնորոշ իրերն ու հագնվելաոճը

2" Փորձե՛ք գտնել, թե ի՞նչ է « J. R. "Bob" Dobbs-esque»–ը

3" Աշխատե՛ք խմբերով: Ձևավորեք միջավայր՝ համապատասխան ժամանակաշրջանին բնորոշ հագուստի, ինտերիերի և ամվտոմեքենայի ընտրությամբ:

4"Օգտվե՛ք հղումներից

https://hetq.am/hy/tag/retro-club?page=2

https://oborudow.ru/hy/tyuning/samye-krasivye-retro-avtomobili-samye-stilnye-retro-avtomobili/

https://www.last.fm/tag/retro/artists

ՈՍԿԵ ԴԱՐ*

«Ոսկե դար» տերմինը գալիս է հունական դիցաբանությունից, և մաս է կազմում հինգ դարերի ժողովուրդների կեցության նկարագրության, որի ընթացքում մարդկությունն ապրել է: Ըստ Հեսիոդոսի՝ մարդկանց առաջին սերունդը Կռոնոսի ժամանակ վայելել է կատարյալ երջանկություն, չիմանալով ո՝չ վիշտ, ո՝չ չար արարք, ո՝չ ծերություն, կյանքն անցկացրել խնջույքներում: Հողն առատ բերք է ընձեռել, մարդիկ ունեցել են բազմաքանակ հոտեր և աշխատել ըստ ցանկության: Ոսկե դարին հետևել են հաջորդաբար առավել ծանր ու աղետալի արծաթե և պղնձե դարերը, իսկ հերոսների փառավոր և միջանկյալ դարից հետո՝ երկաթե դարը, որտեղ մարդիկ չարչարվում են գիշեր-ցերեկ, կյանքը կարճատև է, երեխաները ծնվում են ծեր, թագավորում են գժտություններն ու պատերազմները: Ոսկե դարի վերաբերյալ պատկերացումներն ստեղծվել են դասակարգային հասարակության առաջացմանն ու խորացմանը զուգահեռ: Այդպիսիք գոյություն են ունեցել նաև հնագույն այլ ժողովուրդների մոտ (բաբելոնացիներ, հայեր, հնդիկներ, պարսիկներ են): Վերածննդի և լուսավորական գրականության ներկայացուցիչներից ոմանք (Պ. Մարտիր, Մ. Մոնտեն, Ժ. Ժ. Ռուսո, Դ. Դիդրո, Գ. Հերդեր և ուրիշներ), նույնիսկ XIX դարում որոշ գիտնականներ (Լ. Մորգան, Ն. Ի. Զիբեր և ուրիշներ) ոսկե դարի առասպելի ազդեցությամբ փորձել են իդեալականացնել մարդկության «բնական» (բնության բանական օրենքներով ապրելու) վիճակը: Ի հակակշիռ այդ իդեալականացման, Վ. ի. Լենինը գրել է, որ մեզանից առաջ չի եղել ոչ մի ոսկե դար, և «նախնադարյան մարդը» ճնշվել է բնության դեմ գոյության պայքարի դժվարություններով;

Հեսիոդոսի տարբերակում Ոսկե դարն ավարտվեց, երբ Տիտան Պրոմեթևսը մարդկությանը հանձնեց կրակի և մնացած բոլոր արվեստների պարգևը: Դրա համար Զևսը պատժեց Պրոմեթևսին՝ նրան շղթայով կապելով Կովկասի ժայռի վրա, որտեղ արծիվը հավիտյան կտցում էր նրա լյարդը: Աստվածները գեղեցիկ աղջիկ Պանդորային վստահել էին մի արկղ, որի բացումն արգելված էր. սակայն, նրա անվերահսկելի հետաքրքրասիրությունը գերազանցեց նրան և նա բացեց տուփը, դրանով իսկ սանձազերծելով ամեն տեսակ չարիք աշխարհում:



«Ոսկե դար»-ը նշանակում է նախնադարյան խաղաղության, ներդաշնակության, կայունության և բարգավաճման շրջան: Այս դարաշրջանում խաղաղությունն ու ներդաշնակությունը գերակշռում էին նրանով, որ մարդիկ ստիպված չէին աշխատել՝ սնվելու համար երկրի համար, որն ապահովում էր առատ սնունդ: Նրանք ապրեցին մինչև խոր ծերություն՝ երիտասարդ տեսքով, ի վերջո խաղաղ

* 1.Որևէ ժողովրդի գիտության, արվեստի ու մշակույթի բուռն զարգացման պատմական շրջան:

2" Մարդկության պատմությունն ըստ հնադարյան պատկերացման, բաժանվել է մի քանի դարաշրջանների. մարդկային պատմության առաջին դարը եղել է Ոսկեդարը:

մեռան, ոգիներն ապրեցին որպես «պահապաններ»: Պլատոնը ևս խոսել է մարդկանց ոսկե ցեղի մասին, ովքեր առաջինն էին: Նա պարզաբանում է, որ Հեսիոդոսը նշանակում էր ոչ թե բառացիորեն ոսկուց պատրաստված, այլ լավ և ազնվական:

Կրոնական և փիլիսոփայական ավանդույթներում ևս հաճախ են հանդիպում «Ոսկե դար» կամ նմանատիպ հասկացություններ:

Վեդայական կամ հին հինդու մշակույթը մարդկության պատմությունը համարում էր ցիկլային, յուրաքանչյուր ցիկլ բաղկացած էր չորս յուգայից (դարեր)՝ Սաթյա Յուգա (Ոսկե դար), Տրետա Յուգա (Արծաթե դար), Դվապարա Յուգա (բրոնզե դար) և Կալի Յուգա (Երկաթի դար) և այլն: Նման համոզմունքներ կան նաև հին Մերձավոր Արևելքում և ամբողջ հին աշխարհում, նույնպես

«ՈՍԿԵ ԴԱՐԻ» ԵՐԵՎԱԿԱՅԱԿԱՆ ԱՇԽԱՐՀՆԵՐԸ

Եվրոպական հովվական գրական ավանդույթը հաճախ պատկերում էր նիմֆերին և հովիվներին, ովքեր ապրում էին գեղջուկ անմեղության և խաղաղության կյանքով, նրանց խնամակալ աստվածության՝ այծի ոտնաթաթով Պանի հետ, որը բնակվում էր նրանց մեջ:

Ժամանակակից երևակայական աշխարհներում, որոնց նախապատմությունը և միջավայրը երբեմն մեծապես հիմնված են իրական առասպելների վրա: «Ոսկե դարաշրջան»-ին նման կամ համատեղելի հասկացություններ գոյություն ունեն երևակայական աշխարհների մասին պատմություններում. որտեղ գոյություն ունեն աստվածություններ կամ էլֆերի նման արարածներ:

«ՈՍԿԵ ԴԱՐԻ» ԱՅԼ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ

«Ոսկե դար» եզրույթը հաճախ օգտագործվում է նաև տվյալ երկրի պատմության որոշակի ժամանակի համատեքստում, ինչպիսիք են «Իսպանական ոսկե դարը», «Հոլանդական ոսկե դարը», «Դանիական ոսկե դարը», «Հայկական ոսկե դար:

Հաճախ հանդիպում ենք «Ալպինիզմի ոսկեդար», «Ամերիկյան անիմացիայի ոսկե դար», «Կոմիքսների ոսկե դար», «Գիտաֆանտաստիկայի ոսկե դար», «Հեռուստատեսության ոսկե դար», «Հոլիվուդի Ոսկե դար», «Արկադային տեսախաղերի ոսկե դար», «Ռադիոյի ոսկե դար», «Հիպ հոփի ոսկե դար», և նույնիսկ «Ծովահենության ոսկե դար» եզրույթները:

ՀԱՅԿԱԿԱՆ ՈՍԿԵԴԱՐ

Հայոց պատմության 5-րդ դարը կոչվել է Ոսկեդար: Այդ ժամանակ է զարգացում ապրել պատմագրությունը, փիլիսոփայությունը, թարգմանական և կրոնական գրականությունը, քերականությունը, ճարտախոսությունը և վարքագրությունը: Առաջին հերթին դա հայոց գրերի գյուտն է: 5-րդ դարում ազգային դպրությունը, հայ հին գրականությունը հասել են բարձր մակարդակի, ստեղծվել են հին գրականության դասական նմուշներ՝ Ագաթանգեղոսի, Կորյունի, Եղիշեի, Փավստոս Բուզանդի, Մովսես Խորենացու, Ղազար Փարպեցու պատմությունները, Եզնիկ Կողբացու աստվածաբանափիլիսոփայական երկը, որոնք մեծ ազդեցություն են ունեցել հին և միջին դարերի գրականության ընթացքի վրա:

Առաջադրանքներ

1. Պատրաստե՛ք «Ոսկե դար»-ը պատկերող կոլաժ, ընդգրկելով դասանյութում նշված ժամանակահատվածներն ու մեկնաբանությունները:

2" Նկարագրե՛ք ձեր պատկերացրած «Ոսկեդարը»:

2"Օգտվե՛ք հղումներից՝

https://quizizz.com/admin/quiz/5dca7a32474e80001b73047b/%D5%B8%D5%BD%D5%AF%D5%A5%D5%A4%D5%A1%D6%80

https://narinemakaryan.wordpress.com/2019/03/24/%D5%B0%D5%A1%D5%B5-%D5%B4%D5%B7%D5%A1%D5%AF%D5%B8%D6%82%D5%B5%D5%A9%D5%AB-%D5%B8%D5%BD%D5%AF%D5%A5%D5%A4%D5%A1%D6%80%D5%A8/

ԲՈՀԵՄԱԿԱՆ ՈՃ

Ֆրանսերենում գնչուներին տրվող անվանում է ֆր.՝ bohémiens, որ նշանակում է Բոհեմիայի բնակիչներ՝ բոհեմցիներ: Բոհեմիան պատմական շրջան է ներկայիս Չեխիայի տարածքում, որտեղ միջնադարում բազմաթիվ գնչուներ են ապրել, այսինքն՝ արվեստի ներկայացուցիչների՝ դերասանների, երաժիշտների անհաստատ կյանքը համեմատվել է գնչուների կյանքի հետ:

Եզրը ծագել է Ֆրանսիայում 19-րդ դարի երկրորդ կեսին և հանրաճանաչություն է ձեռք բերել Անրի Մյուրժեի «Դրվագներ բոհեմական կյանքից» վեպի հրատարակումից հետո 1849:

Բոհեմը, կյանքի ոչ կանոնավորված, էքսցենտրիկ ոճ է, որ բնորոշ է մտավորականության որոշակի հատվածի կամ նրանց, ովքեր վարում են համանման կյանք: Այն մտավորականության և հասարակական այլ խավերի՝ թատերական, գրական շրջանների շերտավորումն է, արվեստի, թատերական գործիչների շրջանակը, որ սովորաբար ապրում է անհաստատ եկամտով: Բոհեմական կյանք վարողները կարող են փոքր-ինչ արկածախնդիր կյանքով ապրել, ազատ կյանքի կողմնակիցներ են, շատ դեպքերում ակամա հայտնվում են աղքատության մեջ: Առավել ապահով բոհեմական շրջանակը հաճախ անվանում են «բարձր բոհեմ»:

«Bohemian Manifesto: a Field Guide to Living on the Edge» գրքի հեղինակ Լարեն Սթոուերը բոհեմը բաժանում է հինգ տարբեր մտքի կամ ոճերի՝

Nouveau – հարուստ բոհեմներ, ովքեր փորձում են ավանդական բոհեմականությանը միացնել ժամանակակից մշակույթին:

Gypsy – արտագաղթող տեսակ, նրանք ստեղծում են նիրվանայի իրենց գնչուական իդեալը՝ ուր էլ որ գնան:

Beat – ոչ նյութապաշտական և արվեստի վրա կենտրոնացած:

Zen – կենտրոնանում են ոչ թե արվեստի, այլ հոգևորության վրա:

Dandy – փող չունեն, բայց նրանց շրջանում միշտ թանկարժեք կամ հազվագյուտ իրեր կան, օրինակ՝ թանկարժեք ոգելից խմիչքներ:

19-րդ և 20-րդ դարերի եվրոպական և ամերիկյան շատ հայտնի գործիչներ պատկանել են բոհեմական ենթամշակույթին: Բոհեմականությունը հավանության է արժանացել որոշ բուրժուական գրողների կողմից, օրինակ՝ Օնորե դե Բալզակը: Բայց պահպանողական մշակութային քննադատների մեծ մասը չի ընդունում բոհեմական կենսակերպը:

ԲՈՀԵՄԱԿԱՆ ՈՃԸ ԱՐՎԵՍՏՈՒՄ

20-րդ դարից բոհեմիան արտահայտվեց դարի խոշոր վարպետների ստեղծագործության մեջ, նրանց գեղարվեստական գործունեության այս կամ այն շրջանում:

Իմրե Կալման - "Մոնմարտրի մանուշակ" օպերետ

Շառլ Ազնավուր - "Բոհեմ", "Բոհեմական ռապսոդիա"

Ջակոմո Պուչչինի - Բոհեմ օպերա

Ամադեո Վիվես - "Բոհեմ" սարսուելա

Ռուջերո Լեոնկավալո - "Բոհեմ"

Անրի Մյուրժե - "Դրվագներ բոհեմական կյանքից"

«ԲՈՀԵՄԱԿԱՆ ՌԱՓՍՈԴԻԱ»

Շատերի կարծիքով Ֆրեդի Մերկուրիի և «Queen» խմբի ամենահզոր և ստացված գործը «Bohemian Rhapsody»-ն է: Երգը, որը կարելի է բաժանել վեց մասի, մինչև օրս էլ համարվում է ռոք երաժշտության ամենահանելուկային գործերից մեկը: Արդեն մի քանի տասնամյակ շարունակ տարբեր մարդիկ փորձում են հասկանալ երգի տեքստն ու ընկալել հեղինակի փոխանցած հաղորդագրությունը, իսկ քննադատները շարունակում են զարմանալ՝ ինչպես է հեղինակը կարողացել մի ստեղծագործության մեջ համատեղել մի քանի ժանր, որոնք, թվում է՝ իրար հետ ոչ մի կապ պետք է, որ չունենային:

«Bohemian Rhapsody»-ի շուրջ շատ ու շատ լեգենդներ են պտտվում, իսկ երգի հետ կապված հարցերի շարանի մեծ մասը շարունակում է անպատասխան մնալ: Այս ստեղծագործությունը ոգեշնչման աղբյուր է դարձել շատ ֆիլմերի, ռեժիսորների և ռոք խմբերի համար:

Queen՝ «Bohemian Rhapsody»

ՍԿԻԶԲ

Իրական կյա՞նք է, թե՞ երևակայության արդյունք:
Սողանքում խրված եմ, իրականությունից փախուստ չկա:
Բացի՛ր աչքերդ, նայի՛ր երկնքին ու տես՝
Ես ուղղակի մի խեղճ տղա եմ, կարեկցանքի կարիք չունեմ,
Քանի որ ես հեշտ հասանելի եմ՝ մի քիչ բարձր եմ, մի քիչ ցածր,
Ինձ համար կարևոր չէ՝ որ ուղղությամբ է քամին փչում:

ՏՈՒՆ 1

Մամա՛, հենց նոր մարդ սպանեցի,
Ատրճանակը գլխին դրեցի, ձգանը քաշեցի, և հիմա նա մահացած է:
Մամա՛, կյանքը դեռ նոր է սկսվել,
Բայց ես արդեն հասցրել եմ այն դեն նետել:
Մամա՛, օ՜հ, ես չէի ուզում ստիպել, որ լաց լինես,
Բայց վաղն այս ժամին ես ետ չեմ դառնա,
Շարունակի՛ր ապրել, շարունակի՛ր ապրել՝ կարծես ոչինչ չի եղել:

ՏՈՒՆ 2

Շատ ուշ է, իմ ժամանակն է եկել:
Սարսուռ է պատել ինձ, մարմինս ցավում է անընդհատ,
Մնա՛ք բարով, պետք է գնամ,
Պետք է թողնեմ ձեզ ու ճշմարտությանը դեմ դիմաց կանգնեմ:
Մամա՛, օ՜հ, որ ուղղությամբ էլ քամին փչի…
Չեմ ուզում մեռնել,
Երբեմն երազում եմ, որ երբեք էլ ծնված չլինեի:

ՏՈՒՆ 3

Մի կարճահասակ մարդու ստվեր եմ տեսնում,
Սկարամուչա, Սկարամուչա կպարե՞ս ֆանդանգո:
Ամպրոպն ու կայծակը, շատ են վախեցնում ինձ,
Գալիլեո, Գալիլեո, Գալիլեո, հոյակապ Ֆիգարո:
Բայց ես ուղղակի մի խեղճ տղա եմ, ոչ ոք ինձ չի սիրում:
(Նա ուղղակի խեղճ տղա է մի խեղճ ընտանիքից)
Պահպանիր նրա կյանքն այս հրեշայնությունից:

Ես հեշտ հասանելի եմ, կթողնե՞ս՝ գնամ:
Աստծո սիրուն: Ո՛չ, չենք թողնի գնաս:
Թող՝ գնա, Աստծո սիրուն: Ո՛չ, չենք թողնի՝ գնաս:
Թող՝ գնա, Աստծո սիրուն: Ո՛չ, չենք թողնի՝ գնաս:
Թողե՛ք գնամ: Չենք թողնի՝ գնաս:
Թողե՛ք գնամ: Չենք թողնի՝ գնաս:
Ո՛չ, ո՛չ, ո՛չ, ո՛չ, ո՛չ, ո՛չ:
Մամա միա, թողե՛ք գնամ,
Բիլզբաբը՝ սատանան, ինձ համար հրեշ է նախապատրաստել:

ՏՈՒՆ4

Ուրեմն կարծում ես կարո՞ղ ես քարացնել ինձ ու թքել աչքիս մեջ,
Ուրեմն կարծում ես կարո՞ղ ես սիրել ինձ ու թողնել, որ մեռնեմ:
Օհ, փոքրի՛կս, չես կարող ինձ հետ այդպես վարվել:
Ուղղակի պետք է դուրս գամ այստեղից:

ԱՎԱՐՏ

Ոչինչ էլ կարևոր չէ, բոլորը տեսնում են՝
Ոչինչ իրականում կարևոր չէ:
Ոչինչ կարևոր չէ ինձ համար
Ինչպես էլ քամին փչի: *Թարգմանությունը՝ VNews-ի*

ՆՈՐԱՁԵՎՈՒԹՅՈՒՆ

Բոհեմական ոճը կամ Բոհոն (Boho) ստեղծագործական անհատների նախապատվությունն է, ովքեր փորձում են հագուստով արտահայտել իրենց սկզբունքներն ու բնավորությունը: Իր ստեղծման օրվանից այն եղել է երաժիշտների, նկարիչների, դերասանների և նորաձևության դիզայներների սիրված ոճ:

Բոհոյի ոճը բաժանված է մի քանի ենթակարգերի.

Նոր հիպպին

Էկո ոճը

Boho chick

Անտուն ոճ

Այն ենթադրում է բազմաշերտություն, գույներ, տրամադրություն:

Բազմաշերտ պայծառ հանդերձանքը չի վրիպում ուրիշների ուշադրությունից:

Շատ տարիներ առաջ, բոհեմական ոճը գրավում է ազատ մտածող անհատների ուշադրությունը, որոնց համար նրանց տեսքը առաջնային խնդիր չէ:

Բոհո ոճի դիզայներների հիմնական թիրախային խումբը ստեղծագործ երիտասարդներն են, ովքեր ցանկանում են անհատականություն ցուցադրել և արտացոլել հագուստի մեջ իրենց նախասիրությունները:

Բոհոյի ոճն այնքան անհատական է, որ դրանում դժվար է գտնել ոչ միայն նույնական, այլև նմանատիպ եզրեր: Boho-ն ոչ միայն հագուստ է, այլև բազմաթիվ պարագաներ, որոնք թույլ են տալիս ամբողջացնել պատկերը:

Այս ամբողջ անհամաձայնությամբ, պատկերը բավականին ներդաշնակ և նորաձև է թվում: Բոհեմական ոճն արտաքինից հիշեցնում է անցած դարաշրջանի տիկնանց զգեստները: Ամեն օր

նման հանդերձանքներ կրելը դժվար թե հաջողվի, բայց ռոմանտիկ երեկոյի համար միանգամայն ընդունելի է:

Բոհոյի ոճային զգեստերը աներևակայելի գրավիչ են թվում: Հագուստը զարդարված է լինում վառ երկրաչափական կամ վերացական զարդանախշերով և արտացոլում է որոշակի դարաշրջանի ոգին:

Ասեղնագործության, գործիքների, զարդանախշերի և կախազարդերի կոմպոզիցիաների առատությունը լավագույնս փոխանցում է բոհո ոճի հիմնական նրբությունները:

Ընդհանուր առմամբ, boho ոճը բազմազան ոճերի, հյուսվածքների, գույների համադրություն է: Այն թույլ է տալիս հագուստի օգնությամբ ցուցադրել ձեր անհատականությունը՝ վերցնելով այն բաները, որոնք ձեզ ամենաշատը դուր են գալիս:

Բոհոն ենթադրում է պատկերի տարրերի գունային համադրության մեջ բացարձակ ազատություն: Հիմնական կանոնը՝ որքան շատ գույներ լինեն պատկերում, այնքան ավելի գրավիչ է թվում:

1950,60,70-ականներին ամերիկյան երիտասարդությունը այս ոճը սկսեց օգտագործել հիպպիական շարժման մեջ:

ԻՆՏԵՐԻԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ

Բոհեմյան ոճը սիրում է վառ գույներ: Բայց նրանք կարող են ներխուժել փոքր ինտերիեր: Հետևաբար, սպիտակ պատի ներկը և գորշ հատակը օգնության են հասել, և դրանք ծառայում են որպես կատարյալ հիմք բազմագույն պարագաների համար:

Բոհեմական ոճի ինտերիերի առավել ակնհայտ առանձնահատկություններից մեկը բազմազանությունն է: Ձանձրույթը բացառվում է նման տարածությունից: Կան փայտի, մետաղի, պլաստմասե, ապակու, թավշի, մետաքսի և ջուդի դեկորատիվ առարկաներ, և դրանք լիովին ներդաշնակ են: Հմայքն այստեղ գալիս է այն հակադրություններից, ինչպիսիք են հյուսվածքներն ու գույները: Այս տանը դուք կարող եք տեսնել բազմաթիվ բնական մանրաթելային գորգեր, զամբյուղներ, նկարներ և գոբելեններ:

Ացտեկների մոտիվները դինամիզմ են բերում:

Այստեղ մեծաքանակ արձանիկներ և փոքր զարդարանքներ կան: Այստեղ դիզայներները նախընտրում են էթնիկ ոճի առանձնահատկությունները: Տվյալ ազգության մասին ակնարկ չկա, կան միայն մեքսիկական և հնդկական մշակույթների մի քանի հետքեր: Միասին նրանք ստեղծում են հանգստանալու և միաժամանակ դինամիկ մթնոլորտ:

Առաջադրանքներ

1. Ձևավորե՛ք Բոհեմին վերաբերվող երաժշտական ստեղծագործություններից որևէ մեկը: Ընտրե՛ք համապատասխան միջավայր՝ բեմ, հրապարակ, նորաձևության ցուցադրություն և այլն:

2" Փորձե՛ք մեկնաբանել «Bohemian Rhapsody» ստեղծագործության հեղինակի փոխանցած հաղորդագրությունը:

3" Քննարկե՛ք, հարմա՞ր է, արդյոք, առօրյայում կրել Բոհո ոճը:

4" Օգտվե՛ք հղումներից՝

https://www.youtube.com/watch?v=0kHGUaB1Bs8

https://www.youtube.com/watch?v=fJ9rUzIMcZQ

https://www.youtube.com/watch?v=pzvqwJaUcuY

ՌԱԲԻՍ

Ռաբիս կամ ռաբիզ

Անվան ծագման մասին համաձայնություն չկա: Ըստ տարածված ստուգաբանության՝ այն ծագել է ռուսերեն «рабочее искусство» արտահայտությունից, որը նշանակում է բանվորական արվեստ: Այլ տեսությունների համաձայն, ունի թուրքական կամ արաբական ծագում: «Ռաբ» բառը արաբերենում նշանակում է ստեղծող կամ աստված, իսկ «ազիզ» բառը՝ սիրելի:

Ռաբիս հասկացությունը գործածության մեջ է մտել Խորհրդային Միության ժամանակաշրջանում: Արվեստի աշխարհն ի մի բերելու և արվեստագետներին մեկ կազմակերպության մեջ միավորելու նպատակով, 1920-ական թվականների սկզբին ստեղծվեց ՍՍՀՄ արվեստի աշխատողների արհմիությունը և, համապատասխանաբար, ռաբիսի հայաստանյան տարածքային բաժինը: Որոշ ժամանակ անց ստեղծագործական միություններ կազմավորվեցին, իսկ դրանից հետո արվեստագետներն ու գրողները ըստ ոլորտների առանձնացան և ռաբիսը աստիճանաբար վերածվեց հարսանիք և հուղարկավորություն սպասարկող սիրողական երաժիշտների հիմնարկի: Խորհրդային Միության փլուզումից հետո, ռաբիսն իբրև հանրամատչելի երաժշտություն լայն տարածում գտավ Հայաստանում, որտեղից տարածվեց նաև հայկական սփյուռքի համայնքներում, հատկապես՝ Լոս Անջելեսի շրջանում, որտեղ և ներկայում արտադրվում է ռաբիս երաժշտության մեծ մասը:

Ներկա ռաբիս երաժշտությունը, ըստ քննադատությունների, արաբական կամ թուրքական ծագում ունի: Հատուկ են կլկլակոկորդ ձայները [թուրք - արաբական մելիզմներ], ոչ հայեցի հնչերանգները և շեշտադրությունները: Դա ընդհանրապես հիմնված է հանրամատչելի բալադի վրա՝ սիրո թեմայով: Ռաբիսի երգիչները, մի քանի բացառություններով, տղամարդիկ են: Ռաբիսը համեմատելի է թուրքական արաբեսկ ոճի հետ, որը նաև պատկանում է բանվոր դասակարգին: Արաբեսկն էլ, ինչպես ռաբիսը Հայաստանում, քննադատվել է Թուրքիայում իր արաբական ոճի համար:

Ռաբիզը (հայերեն՝ ռաբիզ կամ ռաբիս) հայկական ժողովրդական երաժշտության ժանր է, որն առանձնանում է բառերով և պարային ուղղվածությամբ սինթեզված մեղեդիներով՝ հայկական ժողովրդական երաժշտության տարրերով: Ռաբիզն առաջին անգամ Երևանում հայտնվեց 1970-80-ականներին և հաճախ կապվում էր Բաքվից, Կիրովաբադից և Հայաստանի գյուղական շրջաններից հայ գաղթականների հետ: Ռաբիզի երգիչները բացառությամբ արական սեռի են: Բոլորովին վերջերս ռաբիզի երգերը համալրվեցին ավելի ծանր մշակումներով և էլեկտրոնային պարային երաժշտության տարրերով՝ իրենց գործիքավորմամբ:

Թեև երգիչներն ու նրանց հանդիսատեսը հիմնականում ռաբիզը նշում են որպես երաժշտական ժանր, տերմինը նաև լայնորեն օգտագործվում է որոշակի տեսակի ենթամշակույթի մասին՝ իր հատուկ նորաձևությամբ, ռուսերենից ժարգոնով և ապրելակերպով: Ժանրը քննադատության է արժանացել տարբեր երաժշտական քննադատների կողմից՝ մերձավորարևելյան և թուրքական արաբեսկ երաժշտության հետ ընկալվող նմանությունների պատճառով:

Հայաստանից դուրս ռաբիզը նաև ժողովրդականություն է վայելում հայկական սփյուռքում, մասնավորապես՝ Ռուսաստանում և Լոս Անջելեսում՝ Կալիֆոռնիա: Ժանրի կատարողներից շատերն այժմ մեծ ժողովրդականություն են վայելում սփյուռքահայ ունկնդիրների շրջանում:

Ռաբիզ երգի ձևը տարբերվում է մեկնաբանման և ընկալման մեջ: Ոմանք տերմինը վերագրում են ժամանակակից հայկական պարային երաժշտությունը նկարագրելու համար, որը սովորաբար արագընթաց է և բեռնված լավատեսական տեմպերով: Ներկայիս հայկական էստրադայի ողջ սպեկտրի շրջանակում հանդես եկող որոշակի արտիստի երաժշտությունը սուբյեկտիվորեն կարելի է ռաբիզ համարել՝ կախված ունկնդրի նախասիրություններից:

Այնուամենայնիվ, այժմ ավելի ընդունված է ժողովրդական բալլադի վրա հիմնված երգի կառուցվածքը, որը սովորաբար երգվում է՝ սիրո կամ կարոտի հաղորդագրություն փոխանցելիս: Վոկալը սովորաբար երգվում է տենորով և ընդօրինակում է թուրքական կամ արաբական երաժշտության մեջ լսվող ավանդական, ինչպես նաև հիմնական վոկալ ոճերը: Երգերից շատերը մերձավորարևելյան են, բայց հայալեզու բառերով: Սովորաբար նվագախումբը բաղկացած է լինում ամբողջովին սինթեզված գործիքներից, որոնք երբեմն ուղեկցվում են հայկական դուդուկի նվագակցմամբ՝ ընդգծելու համար մռայլ տրամադրությունը: Ավանդական ռաբիզ երգը հասցեագրված է սիրելիներին, առաջին հերթին՝ ծնողներին կամ նշանակալից մեկին: Ռաբիս երգիչների և այդ երգերի սիրահարների մասին տարածված են մի շարք կարծրատիպեր, որոնք վերաբերում են այդպիսի մարդկանց արտաքին տեսքին, կենսաոճին և մտածելակերպին:

Ռաբիզ կատարողների և նրանց հետևորդների կարծրատիպային նկարագրությունները, ձևավորվել են վերջին տարիների ընթացքում: Իրականում նրանք պիտակավորվում են որպես ռաբիզ իրենց արտաքին տեսքի, ինչպես նաև ժողովրդական մշակույթով զբաղվելու համար: Այս երաժշտության հետ առնչություն ունեցող տղամարդկանց հագուստի ոճը հատուկ է, հիշեցնելով միատեսակ համազգեստ: Սովորական գունային սխեման ամբողջովին սև է, սակայն սպիտակ վերնաշապիկը կամ տաբատը ընդունելի են, որպես հակադրություն: Երիտասարդները հագնում են կամ սև միանման շապիկներ, կամ արհեստական կաշվից բաճկոններ՝ սև տաբատով կամ ջինսերով:

Որպես աքսեսուար կրում են մուգ, ուղղանկյուն արևային ակնոցներ և սև գոտիներ՝ մեծ, քառակուսի պլատինե գույնի ճարմանդներով: Բջջային հեռախոսի վերջին մոդելը պարունակող փոքրիկ պատյանը ամրացվում է գոտուն և տեղադրվում ազդրի վրա: Ընտրված կոշիկները կաշվե, սովորաբար սև գույնի և նեղ չափի, բարձր գարշապարով և անսովոր կտրուկ ծայրով, որը որպես տատանում թեքվում է դեպի վեր կամ քառակուսի է: Մազերը կտրված են շատ կարճ, երբեմն սափրված, կամ բաժանված՝ աջից կամ ձախից: Ռաբիզ տղամարդկանց կեցվածքը սովորաբար կորացած է, թեքված ուսերով, կամ նրանք ցած են կռանում գետնին, իսկ նախաբազուկները հենված են ծնկներին: Նրանք, ովքեր կարող են ավտոմեքենա գնել, վարում են Lada 2107, 112 կամ Niva սպորտային օգտակար մեքենաները, չնայած այժմ համեմատաբար նոր եվրոպական, ինչպես նաև ճապոնական սեդաններ են տարածված: Լադան ամենից հաճախ ներկված է վառ սպիտակ գույնով, բացառությամբ 112-ի, որոնցում պատկերված են սև մգեցված ապակիներ և բարձրորակ փայլուն քրոմապատ անիվներ, էլ չենք խոսում մաքսային համարների մասին:

Առաջադրանքներ

1. Քննարկե՛ք, որքանո՞վ է արդարացված ռաբիս մշակույթի մեծ ժողովրդականությունը:

2. Քննարկե՛ք, համաձա՞յն եք ներկայացված նյութի հետ:

3"Ունկնդրե՛ք աշուղական և ռաբիս երկու ստեղծագործություն, փորձե՛ք կատարել համեմատություն:

ՀԻՊՊԻ

Սեր, խաղաղություն, երաժշտություն, ազատություն, փիլիսոփայություն: Հիպիները ոտաբոբիկ ռահվիրաներ էին, նրանց գաղափարները, որոնք 70-ականների պահպանողական հասարակությանն ուտոպիստական էին թվում, այսօր ժամանակակից մարդու մտածելակերպի բաղկացուցիչներն են: Այնուամենայնիվ, հիպիների մասին կարծրատիպերը թեև նվազել, սակայն չեն վերացել:

Հիպպի բառն առաջացել է «հիպ» կամ «հիպսթեր» բառից, որն օգտագործում էին բիթնիկները: Բառացիորեն դա նշանակում է իմանալ, այդպիսով, «հիպը» նա է, ով «հասկացել» է, «գիտակցել» է. նա, ով իմաստուն է: Հիպիներն իրենք իրենց երբևէ այդկերպ չէին բնութագրում, նրանք նախընտրում էին «հիանալի մարդիկ» ձևակերպումը: Այնուամենայնիվ, ԶԼՄ-ները սկսեցին շահարկել հենց հիպի եզրույթն ու օգտագործել այն ամենուր, որպես այն բնութագրիչ երիտասարդների, որոնք երկարացնում էին մազերը, ռոք էին լսում, թմրանյութեր էին օգտագործում, զբաղվում էին ազատ սիրով, իրար գլուխ էին հավաքվում՝ փառատոններին ու ցույցեր էին անում՝ մերժելով 60-ականների մասսայական մշակույթը:

Հիպի (անգլ.՝ Hippie), ենթամշակույթ, որն առաջացել է ԱՄՆ-ում: Ծաղկման շրջանը եղել է 1960-ականներին, Հիպիների կարգախոսն է «Սեր այլ ոչ թե պատերազմ»: Հիպիները կարծում են մարդիկ պետք է ազատ լինեն, և ազատության հասնելու համար պետք է փոխել հոգու ներքին կառուցվածքը: Առաջին անգամ Հիպի բառը օգտագործվել է Նյու Յորքում, դա երիտասարդների մի խումբ էր, որոնք կրում էին ջինսե տաբատներ, ունեին երկար մազեր և դեմ էին Վիետնամական պատերազմին: Հիպիները խաղաղության կողմնակիցներ են, նրանք ավելի կողմ են արևելյան մշակույթին և սիրում են Բուդդայականությունը, նրանց մեծամասնությունը բուսակեր է: Նրանք շատ խորհրդավոր են, սիրում են կրել զարդեր և գլխին միշտ ունենում են ծաղկե պսակ, իսկ տղամարդիկ կրում են սանդալներ, նրանք սիրում են ապրել խմբերով ծիածանե տուն կոչվող ավտոմեքենաների մեջ:

Այլ հավատալիքներ, որոնք բխում են հիպիների փիլիսոփայությունից. երկրային հոգևորություն, հավատ՝ Գեային, Երկրին, որպես մեկ ամբողջական օրգանիզմ, կանաչների շարժում, շամանություն և բուսակերություն: Այս փիլիսոփայական և քաղաքական հայացքները արտացոլում են հարգանքը՝ բնության և ամբողջ մոլորակի նկատմամբ, այսինքն այն ամենն, ինչն այսքան պակասում է մեր կապիտալիստական և մատերիալիստական հասարակությանը: Աշխարհին հարկավոր են հիպիներ՝ հաստատված համակարգին այլընտրանքներ ցույց տալու և վերահաս աղետների մասին նախազգուշացնելու համար, որոնք կգան, եթե մենք չփոխենք մեր կյանքի ուղին:

Հիպիների պնդմամբ, նրանք ցանկանում են փոխել աշխարհը, այն դարձնել ավելի բարի, օգնել միմյանց սիրել մերձավորին և բոլորին: Նրանք սիրում են ազատություն, շատ երգիչներ ևս հիպի են եղել նաև Ջոն Լենոնը և նրա կին Յոկո Օնոն: Հիպիները ինտելեկտուալ զարգացած մարդիկ են:

Հիպիները ձգտում էին ազատվել հասարակության սահմանափակումներից, ընտրել իրենց ուղին և գտնել կյանքի նոր իմաստ: Հիպիների անկախության մեկ այլ արտահայտություն էր նրանց հագնվելու և խնամելու չափանիշների մեջ, ինչը հիպիներին ակնթարթորեն ճանաչելի էր դարձնում և ծառայում էր որպես նրանց անհատական իրավունքների նկատմամբ հարգանքի խորհրդանիշ: Իրենց արտաքին տեսքով հիպիները բացահայտորեն դեմ էին արտայատվում հասարակության «ուղիղ» և «քառակուսի» (այսինքն՝ կոնֆորմիստական) հատվածներից:

Լինել հիպի նշանակում է որդեգրել որոշակի համոզմունքների ունիվերսալ համակարգ, որը գերակազանցում է հասարակության վերնախավի ցանկացած ստրուկտուրայի քաղաքական, սոցիալական ու բարոյական նորմերին, որոնցից յուրաքանչյուրը նպատակ ունի վերահսկել կամ նույնիսկ ստրկացնել մարդկանց:

Մենք տեսնում ենք, որ պատմությունը անվերջանալի կոնֆլիկտ է՝ հասարակության ու մեկ այլ հասարակության, հավատքի ու մեկ ուրիշ հավատքի, պետության ու հարևան պետության միջև: Հազարամյակներով ձգվող պատերազմներից հետո, որտեղ անվերջ զոհվում ու զոհվում են, գուցե անհրաժե՞շտ է վեր կանգնել մեր աննշան տարբերություններից. հիպիներն ասում են՝ անհրաժեշտ է:

Հիպիի նորաձևությունն ու արժեքները մեծ ազդեցություն ունեցան մշակույթի վրա՝ ազդելով հանրաճանաչ երաժշտության, հեռուստատեսության, կինոյի, գրականության և արվեստի վրա: 1960-ականներից սկսած՝ հասարակությունը յուրացրել էր հիպի մշակույթի բազմաթիվ ասպեկտներ: Կրոնական և մշակութային բազմազանությունը, որին աջակցում էին հիպիները, լայն տարածում գտավ, և արևելյան փիլիսոփայության և ասիական հոգևոր հասկացությունների նրանց կարգախոսները մեծ տարածում գտան:

Հիպիները մշակույթը տարածվեց ոչ միայն հագուստի և տղամարդկանց ավելի երկար մազերի, այլև երաժշտության, կինոյի, արվեստի և գրականության մեջ, և ոչ միայն ԱՄՆ-ում, այլև ամբողջ աշխարհում:

Նկարահանվեցին բազմաթիվ գեղարվեստական և վավերագրական ֆիլմեր, ստեղծվեցին մյուզիքլներ: Կազմակերպվում էին հեռուստահաղորդումներ Հիպպի ենթամշակույթի վերաբերյալ, գրվում էին գեղարվեստական և ոչ գեղարվեստական գրքեր:

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

Նյու Յորքի Բեթել քաղաքում կայացած Վուդսթոք երաժշտության և արվեստի փառատոնը, շատերի հնարավոր ստեղծեց տեսնել և լսել հիպի հակամշակույթի լավագույններին: Փառատոնին ներկա էր ավելի քան 500,000 երկրպագու՝ լսելու դարաշրջանի նշանավոր երաժիշտների և խմբերի, որոնցից են Canned Heat-ը, Richie Havens-ը, Joan Baez-ը, Janis Joplin-ը, The Grateful Dead-ը, Creedence Clearwater Revival-ը, Crosby-ն, Stills-ը, Nash & Young-ը, այդ թվում, Carlos Santana-ն, Sly & The Family Stone-ը, The Who-ն, և Jimi Hendrix-ը: Այստեղ սիրո և մարդկային ընկերակցության հիպի իդեալները, կարծես, ձեռք էին բերել իրական արտահայտություն: Նմանատիպ ռոք փառատոններ տեղի ունեցան երկրի այլ մասերում, որոնք նշանակալի դեր խաղացին հիպիների իդեալների տարածման գործում ամբողջ Ամերիկայում:

ԳՐԱՖԻԿԱ, ԴԻԶԱՅՆ,

Ժամանակի ամենանշանավորներից էին Սան Ֆրանցիսկոյի համերգասրահի Ֆիլմոր Ուեսթում համերգների պաստառները, որը սիրված էր Հիպի հանդիսատեսի կողմից: Հագեցած գույները ցայտուն հակադրությամբ, մանրազնին նախշազարդ տառեր, խիստ սիմետրիկ կոմպոզիցիաներով, կոլաժի տարրեր, տարօրինակ պատկերագրություն՝ բոլորը Սան Ֆրանցիսկոյի պաստառների արվեստի ոճի նշաններից են: Նրանց աշխատանքը անմիջապես ազդեցիկ եղավ ալբոմի շապիկի վրա, և իսկապես բոլոր վերը նշված արտիստները նույնպես ստեղծեցին ալբոմի շապիկներ: Լուսային շոուները արվեստի նոր ձև էին, որը մշակվել էր ռոք համերգների համար: Լուսային ձևավորողները ստեղծում էին լուսային էֆեկտներ, որոնք խառնվելով պատկերների և ֆիլմերի հետ ստեղծում էին իմպրովիզացիոն կինոարվեստ, ինչպես նաև ռոք խմբերի իմպրովիզացիոն տեսողական ներկայացումներ, հանդիսատեսի համար ապահովելով հատուկ մթնոլորտ:

Այս շարժման արդյունքում ձևավորվեց կոմիքսների նոր ժանր՝ ընդհատակյա կոմիքս, որը խիստ երգիծական էր: Ստեղծվեց մուլտհերոսներից ամենաերջանիկ կերպարը՝ The Fabulous Furry Freak Brothers- ը, որն կերպարվորում էր հիպի ապրելակերպը:

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆ

Ինչպես նրանց նախորդող բիթ-շարժումներում, այնպես էլ շուտով հաջորդած պանկ շարժումներում, հիպիի խորհրդանիշներն ու պատկերագրությունը դիտավորյալ փոխառված էին կամ «ցածր» կամ «պարզունակ» մշակույթներից, իսկ հիպի ոճը արտացոլում էր անկարգ, հաճախ թափառաշրջիկ ոճը: Հիպիները հակված էին թեթև ճանապարհորդել և կարող էին ցանկացած պահի տեղափոխվել:

Ճանապարհորդության հիմնական միջոցը հիպի բեռնատարներն ու ավտոբուսներն էին, բեռնատարի կամ ավտոբուսի վրա ձեռքով կառուցված շարժական տներով՝ ապրելակերպը հեշտացնելու համար: Այս շարժական տներից մի քանիսը բավականին հարմարավետ էին՝ մահճակալներով, զուգարաններով, ցնցուղներով և գազօջախներով:

ՆՈՐԱՁԵՎՈՒԹՅՈՒՆ

60-ականներին հիպիները գլխիվայր շուռ տվեցին նորաձևությունը: Նրաք «օրակարգ բերեցին» նոր չլսված ոճեր, նոր չտեսնված գույներ: Իրենց հոգեբանական ճանապարհորդության ընթացքում հիպիները հավաքագրել էին ամբողջ աշխարհի նորաձևությունը: Այդպիսով, հիպիների նորաձևությունը հետևյալն էր. «նորաձևություն չկա»:



Հիպիների նորաձևությունը ազդվել է Հնդկաստանի, Նեպալի, Կենտրոնական Ամերիկայի, Բալիի և Մարոկկոյի ավանդական ոճերից: Այս մշակույթներից բացի, նորաձևության դիզայներների ոգեշնչման աղբյուր էր հանդիսանում Վերածննդի դարաշրջանը: Նորաձևության առաջնորդները ժամանակի ռոք աստղերն էին՝ Ջիմի Հենդրիքսը, Բիլների տղաներն ու այլոք:

Տղամարդկանց երկար մազերը որոշակի արհամարհանք էին արտահայտում ընդունվածի ու սովորակիանի հանդեպ: Մազերին գումարվում էին երկար մորուքն ու բեղերը: Իրեն հարգող ոչ մի հիպի երբեք չէր կրի հագուստ՝ որևէ բրենդի լոգոտիպով: Ընդունելի էր միայն էժան, հարմարավետ, հեշտությամբ վերականգնվող, երկրորդ ձեռքի հագուստը: Հիպիների շարժման տղամարդիկ և կանայք հագնում էին ջինս, և պահում երկար մազեր, և երկու սեռերն էլ սանդալներ էին կրում, մոկասիններ կամ ոտաբոբիկ էին քայլում:

Որտեղ հավաքվում էին հիպիները, այդտեղից միշտ խունկի հոտ էր գալիս, իսկ իրենք՝ ծաղիկների երեխաները, համապատասխանաբար, ծաղիկներով էին բուրում. նարդոս, վարդ, գարդենիա՝ ըստ ճաշակի:

ՀԻՊԻ ՈՃԻ ՏՈՒՆ

Հիպպիների բնակավայրը բնորոշվում է գույնի, նախշավոր մոտիվների համադրությամբ, բազմաթիվ բնական տարրերի ձևավորմամբ: Հաճելի և ոգեշնչող վայր ցանկացած ստեղծագործական աշխատանքի համար:

Յուրաքանչյուր տարածք կրում է այն զբաղեցնող անձի անհատականությունը: Կանաչ ներկված սենյակը լուսավոր է և գունավոր: Ջերմ էներգիա հաղորդող սենյակներ, որտեղ առկա են գույների համադրություն և նախշավոր մոտիվներ: Տարբեր նյութերի և գույների աթոռներն ու նստարաններ, սպիտակ սեղան, էթնիկ զրդանախշերով գորգ, ձեռագործ գունագեղ տարրեր, նկարներ:

Առաջադրանքներ

1. Օգտվելով տարբեր աղբյուրներից, ներկայացրե՛ք հիպի ենթամշակույթի խորհրդանիշները:

2. Քննարկե՛ք, համաձա՞յն եք ներկայացված նյութի հետ:

3"Ունկնդրե՛ք դասանյութում նեկայացված երաժիշտների ստեղծագործությունները, փորձե՛ք կատարել համեմատություն:

ԿՈՆՑԵՊՏՈՒԱԼ ԱՐՎԵՍՏ

Կոնցեպտուալ արվեստը կամ կոնցեպտուալիզմը (լատ.conceptus-միտք, պատկերացում), XX դարի արվեստի ուղղություններից է: Ստեղծվել և զարգացել է Ամերիկայում և Եվրոպայում՝ 60-ականների վերջին, 70-ականների սկզբին: Կոնցեպտուալ արվեստի շատ ստեղծագործություններ, որոնք երբեմն անվանում են ինստալիացիաներ, կարող են ստեղծվել ցանկացած անհատի կողմից՝ որոշակի պարզ կանոններին հետևելով:

Կոնցեպտուալ արվեստում աշխատանքի կարևոր և հիմնական մասը «միտքն» է (կոնցեպտը): Երբ արվեստագետը որոշում է կոնցեպտուալ արվեստի աշխատանք ներկայացնել, դա նշանակում է, որ նա նախագծել է իր գաղափարի իրականացման ողջ ընթացքը և պատրաստվել է: Կատարումը ստեղծագործության ավարտն է: Այստեղ կարևորը «արվեստ ստեղծող միտքն» է դառնում:

Ժամանակակից կոնցեպտուալ արվեստն իրականացվում է կատարման, տեղադրման կամ ներկայացման միջոցով:

Ե՛վ ներկայացումը, և՛ տեղադրումը ժամանակակից արվեստի մաս են և նախատեսված են հանդիսատեսին ցուցադրելու համար: Երբեմն մարդու համար դժվար է ընկալել այս հասկացությունների տարբերությունը: Բայց, գոնե մեկ անգամ տեսնելով երկու գործողություններն էլ՝ ամեն ինչ շատ պարզ է դառնում: Այսպիսով, այս հասկացությունների տարբերությունը կարելի է բացատրել ծառի պարզ օրինակով:

Երբ մարդուն առաջարկում են դիտել ծաղկած ծառը և վայելել դրա գեղեցկությունն ու բույրը, տեղադրման օրինակ է: Մարդը դիտում է անշարժ օբյեկտը և դա կատարված փաստ է՝ ծառը ծաղկած է: Բայց եթե դիտողին առաջարկվի դիտել ծառը տնկելու, ջրելու, աճելու, և ավելի ուշ ծաղկման ընթացքը, ապա դա արդեն ներկայացում է: Այստեղ բոլոր գործողությունները կատարում է մեկ անձ:

Ի՞ՆՉ Է ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ (ՊԵՐՖՈՐՄԱՆՍ):

Ժամանակակից արվեստը ներկայացումը մեկնաբանում է որպես անձի կողմից՝ անհատական, մտահղացված պլանի իրականացում և որոշակի դերակատարում: Բովանդակությունը ստեղծողի անձնական ներկայությունը պարտադիր է, որպես կանոն, հեղինակներն ավելի լավ են կարողանում գաղափարը փոխանցել դիտողին: Ներկայացման հիմնական բաղադրիչը շարժումն է: Շարժումը կարող է լինել ակտիվ, հազիվ նկատելի: Կարևորը հեղինակի կողմից իր ստեղծագործության իրագործումն է:

Մեկ անգամ ցույցադրելով գործողությունները մի տեղում, զարդարանքներով և միջավայրով, հեղինակը չի կարող պարզապես ֆիզիկապես կրկնել նույնը երկրորդ անգամ: Ի վերջո, նույնիսկ ամենափոքր մանրուքը, ինչպիսին է քամու պոռթկումը, լուսավորությունը կամ հառաչանքը կարող է արմատապես փոխել դիտողի տեսակետը տեսածի վերաբերյալ:

Ի՞ՆՉ Է ՏԵՂԱԴՐՈՒՄԸ (ԻՆՍՏԱԼԱՑԻԱ)՝

Ժամանակակից արվեստի աշխարհում տեղադրում նշանակում է գեղարվեստական կոմպոզիցիա: Հեղինակն իր ստեղծագործությունը ստեղծում է առանձին, որպես նյութ օգտագործելով բնական ծագման առարկաներ, հագուստ, կենցաղային իրեր: Հեղինակը կարող է համադրել իրար չհամապատասխանող, տարաբնույթ իրեր, արդյունքում ստանալով է բավականին ներդաշնակ ու մտածված արդյունք: Մեզ ծանոթ, սովորական իրերը անսովոր վայրում և միջավայրում երևում են նոր կերպ: Հաճախ կիրառելով տեխնոլոգիական նորարարությունները, լազերների և այլ օպտիկական սարքավորումների միջոցով, կարող են լինել ներկայացումներ և տեսաֆիլմերի ցուցադրումներ:

ՏԵՂԱԴՐՄԱՆ (ԻՆՍՏԱԼԻԱՑԻԱ) ԵՎ ԿԱՏԱՐՄԱՆ (ՊԵՐՖՈՐՄԱՆՍ) ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Հիմնական տարբերությունն այն է, որ տեղադրումը, որպես արվեստի առարկա, կարող է հանրությանը ներկայացվել առանց ստեղծողի ներկայության: Դա կարող է տեղի ունենալ ցուցահանդեսում կամ թվային միջավայրում՝ հեռարձակմամբ: Բայց ներկայացումը հանդիսատեսին ներկայացնելն անհնար է առանց հեղինակի ներկայության, քանի որ հեղինակը այս գործողության բաղկացուցիչ մասն է:

Միևնույն ժամանակ, տեղադրումը կարող է լինել ներկայացման մի մաս ՝ լինելով նույն բեմում, օրինակ՝ որպես զարդարանք կամ ձևավորման մաս: Բայց, հիմնական դերը այնուամենայնիվ, ներկայացման մեջ մարդն է խաղում, նրա գործողություններն ու շարժումները: Ներկայացման մեջ նկարիչն ինքը արվեստի գործ է:

Հաճախ ներկայացումները ցուցադրվում են ոչ թե պրոֆեսիոնալ բեմում, այլ փողոցում: Այդպիսի ներկայացումները կարող են անակնկալ լինել անցորդների համար: Լիովին անպատրաստ մարդը կարող է միանգամից չգիտակցել, թե ինչ է կատարվում:

Քսաներորդ դարում արվեստը ոչ միայն արտացոլում է իրականությունը, այլ սկսում է կենտրոնանալ արտացոլման վրա: Այս արվեստի հիմքում Մարդու, նկարչի ինքնարտահայտման գաղափարն է: Ո՞րն է այս արվեստի ձևի հիմքը - յուրաքանչյուր գաղափարի կամ մտքի «իմաստը»:

Տեղադրումը բացահայտում է մեզ շրջապատող յուրաքանչյուր «օբյեկտ», բացահայտում դրա թաքնված իմաստներն ու առանձնահատկությունները: Տեղադրման համար անհրաժեշտ չէ ընտրել ինչ-որ գեղեցիկ և ակնառու մի բան (գաղափար), ցնցող կամ հակասական բան, օբյեկտը ինքնին եզակի է, ուստի այս տենդենցի հետևորդները ամեն ինչում արվեստ են փնտրում: Տեղադրման էությունը աշխարհում իմաստների և խորհրդանիշների որոնումն է: Դա չի նշանակում, որ ինչ-որ բանի նայելով պետք է դրսից մոտենալ դրա էությանը, ոչ. Տեղադրումն առաջարկում է ինքնուրույն դառնալ այդ օբյեկտը, ներթափանցել ներս և պարզել դրա նպատակը: Ժամանակակից արվեստի այս տեսակի առանձնահատկությունն այն է, որ յուրաքանչյուր անհատի համար «օբյեկտը» գտնում է իր խորհրդանիշները: Այդ պատճառով տեղադրումը որպես ստեղծագործականություն ինքնին բացառիկ է: Մենք բոլորս տարբեր ենք և աշխարհը տեսնում ենք մեր աչքերով, ուստի մեր ինստալիացիան կլինի շատ անհատական և երբեմն անհասկանալի մեկ այլ մարդու համար:

Ինստալյացիան կարելի է բնութագրել, որպես ինքնագնահատման խորհրդանշական դեկորացիա, որը ստեղծվում է որոշակի ժամանակահատվածում, որոշակի անվան տակ: Կարևորը այն է, որը ունկնդիրը չի դիտում այդ ամենը որպես նկար, այլ միանգամից հայտնվում է նրա մեջ:

Որոշ ինստալյացաներ նման են քանդակների, բայց տարբերվում են նրանով, որ պատրաստված են տարբեր նյութերից, իրերից, հաճախ արդյունաբերական ծագման :

ԻՆՍՏԱԼՅԱՑԻԱՅԻ ՎԱՐՊԵՏՆԵՐ

Լաուրի Աստալակինոմպ
Ժոզեֆ Բոյս
Ռոբերտ Ռաուշենբերգ
Ժոզեֆ Կոշուտ
Էդվարդ Կինխոլց
Իլյա Կաբակով
Գևորգ Ժամկոչյան

Առաջադրանքներ

1. Կատարե՛ք ինստալիացիա, օգտագործելով հին լուսանկարներ:
2"Կարարե՛ք պերֆորմանս, «Բնապահպանություն» թեմայով:
3" Օգտվե՛ք հղումներից՝
https://owlcation.com/humanities/17-Greatest-Works-of-Conceptual-Art

ՆՈՐԱՁԵՎՈՒԹՅՈՒՆ

Նորաձևությունն անցնում է, իսկ ոճը՝ մնում հավետ
Կոկո Շանել

Նորաձևությունը կամ՝ մոդան կամ՝ fashion-ը, մարդկությանը մշտապես հետաքրքրող ամենաարդի թեմաներից է:

Moda բառն առաջացել է լատիներեն modus արմատից, որը նշանակում է չափ, ձև, կերպ, կանոն: Մոդան ինքնին որոշակի ճաշակի, փոփոխական թելադրանքն է:

«Մոդայիկ լինել» արտահայտությունը (a la mode) մեզ է հասել դեռևս 17-րդ դարից, երբ ֆրանսիական արքունիքի մոդան օրինակ դարձավ եվրոպական շատ երկրների համար:

Մարդկանց մի մասը հետևում է նորաձևությանը, ծանոթ է վերջին «թրենդներին», գիտի բոլոր դիզայներների աշխատանքները, ու դարձել է նորաձևության գերին: Մյուս մասն էլ սկզբունքորեն դեմ է նորաձևությանը, և նախընտրում է սեփական ճաշակն ու կանոնները:

Նորաձևությունը սեռ ու տարիք չի ճանաչում, նրանով հետաքրքրվում են բոլորը: Եթե տարիներ առաջ մեր երկրում նորաձևությամբ հետաքրքրվում էին միայն կանայք, իսկ երիտասարդ տղաները բացի սև վերնաշապիկից ոչինչ չէին ընդունում, ապա այսօր ուրախությամբ կարող ենք արձանագրել, որ պատկերն այլ է: Հայաստանում վերջին մի քանի տարիներին տղաները սկսել են հետևել նորաձևությանը ու հաճախ ավելի գրագետ ոճային համադրումներով են ներկայանում, քան շատ «գլամուր» աղջիկներ:

Այսօր կարելի է հանդիպել հայ համարձակ ու օրիգինալ երիտասարդների, ովքեր գունային ամենատարբեր լուծումներով են հանդես գալիս, ու հեռու են այն կարծրատիպից, որ հայ տղան բացի սև ու գորշ գույներից չպետք է կրի այլ հագուստ:

Ե՞ՐԲ Է ԾՆՎԵԼ ՄՈԴԱՆ:

Այն ծնվել է մարդկության հետ միասին:

Հայտնի չէ, թե երբ են մարդիկ սկսել հագուստ կրել, բայց մարդաբանները կարծում են, որ կենդանիների կաշիները և բուսականությունը օգտագործվում էին որպես պաշտպանություն ցրտից, շոգից և անձրևից, մանավանդ, երբ մարդիկ գաղթում էին անծանոթ կլիմայով վայրեր: Հագուստը և տեքստիլը կարևոր նշանակություն են ունեցել մարդկության պատմության մեջ:

Դրանք ցույց են տալիս, թե ինչ նյութեր են եղել տարբեր քաղաքակրթություններում, տարբեր ժամանակներում և ինչ տեխնոլոգիաներ են օգտագործվել դրանց ստեղծման համար: Պատրաստի արտադրանքի սոցիալական արժեքն արտացոլել է նրանց մշակույթը:

Հին Հունաստան

Ճապոնիա

14-15-րդ դար

Հին ժամանակներում «շրջազգեստ» ասելով հասկանում էին ինչպես տղամարդու, այնպես էլ կնոջ զգեստապահարանի ցանկացած իր: Տարիների ընթացքում փոփոխության ենթարկվեցին շրջազգեստ հասկացությունը, ինչպես նաև շրջազգեստի համար կիրառվող նյութերն ու ձևերը:

Հին Եգիպտոսում ամենաշատ տարածված զգեստը քիտոնն էր: Հին հույների և հռոմեացիների համար հագուստի հիմնական դետալը տոգան էր, իսկ հույների համար՝ տունիկան:

Մինչև 16-րդ դար՝ շրջազգեստ կրում էին և՛ կանայք, և՛ տղամարդիկ:

Միջին դարերի ընթացքում շրջազգեստներն ավելի ճոխ տեսք ստացան՝ խաչակիրների կողմից բերված արևելյան կտորների և զարդերի շնորհիվ: Բացի այդ, շրջազգեստները ենթարկվեցին նաև ոճային փոփոխության. ի հայտ եկան ժանյակները: Այս ժամանակաշրջանի զգեստները քողարկում էին մարմնի թերությունները:

Բարոկկոյի դարաշրջանում (16-րդ դարի վերջից 17-րդ դար) նորաձևություն մտան ոճայնությունն ու թատերայնությունը: Բարոկկոն ծաղկում ապրեց ֆրանսիայի թագավոր Լյուդովիկոս 14-րդի օրոք, և հենց այդ ժամանակաշրջանից էլ Ֆրանսիան սկսեց թելադրել նորաձևություն ողջ Եվրոպայի համար:

18-19-րդ դարերում կրկին նորաձևություն մուտք գործեց բնականությունը: Զգեստը ձեռք բերեց հստակ չափեր և սահուն գծեր:

Հին Հռոմ

Հին Հայաստան

18-19-րդ դար

Առաջադրանքներ

1. Ծանոթանալով նորաձևության պատմությանը, ի՞նչ օրինաչափություններ եք տեսնում:
2.Օգտվելով տարբեր աղբյուրներից, ներկայացրե՛ք միջնադարյան Հայաստանում տարածված հագուստի առանձնահատկությունները:
3. Օգտվելով տարբեր աղբյուրներից, ներկայացրե՛ք XIX դարի Հայաստանում տարածված հագուստի առանձնահատկությունները:
3. Օգտվե՛ք հղումներից.
https://yerevanstyle.com/13281/
https://www.dasaran.net/apps/wiki/view/id/6023
https://armeniadiscovery.com/hy/articles/armenian-national-clothes-taraz
https://www.armgeo.am/armenian_national_dress/

4" Օգտվելով նմուշներից ձևավորե՛ք որևէ ժամանակաշրջանի հագուստ:



ՔՈ ՈՃԸ

Կերտել ուրույն ոճ, թե՞ ենթարկվել նորաձևության օրեցօր փոփոխվող պահանջներին. հարց է, որը տանջում է շատերին՝ հատկապես երիտասարդներին: Նորաձև լինելու գաղափարն ինքնին արդեն գրավիչ է, բայց շատ հաճախ «նորաձևության հետևից ընկնելը» բերում է ծայրահեղությունների. մարդիկ գնում են հագուստ, որը կարող է թանկ արժենալ, բայց իրենց չսազել: Նման դեպքերում հարկավոր է հիշել մեկ պարզ ճշմարտություն՝ նորաձևությունը ստեղծվում է մարդկանց կողմից ու մարդկանց համար, ուստի պետք չէ տանջվել՝ ծախսելով մեծ գումարներ, ու փոխարենը ձեռք բերել նորաձև, բայց ոչ համապատասխան հագուստ, այլ պետք է հասկանալ, որ նորաձև բազմազան գույների ու նորույթների մեջ ձեզ համար էլ կգտնվի որևէ հարազատ լուծում:

Ճիշտ ընտրված ոճը կարող է դառնալ մարդու հաջողության գրավականը կյանքի բոլոր բնագավառներում: Առաջին հայացքից ձեր փոխարեն ներկայանում է հենց ձեր տեսքը՝ պատմելով ձեր բնավորության, ճաշակի ու խառնվածքի մասին: Եթե դուք լավ տեսք ունեք, ապա ավելի հեշտ կլինի մարդկանց գրավել ձեր կողմն ու տիրել «ֆորտունային»:

Ոչ թե հագուստն է զարդարում մարդուն, այլ մարդն է զարդարում հագուստը: Եվ ամեն ինչ չափի մեջ է գեղեցիկ, չմոռանալով սեփական «ես»-ը:



Առաջադրանքներ

1. Դիտե՛ք պատկերները, ընտրե՛ք ձեզ հարմար հագուստ:

2" Տարբեր նյութեր կիրառելով ստեղծեք կոլաժներ, ներկայացնելով ձեր ամենօրյա հագուստով:

3" Տարբեր նյութեր կիրառելով ստեղծեք կոլաժներ, ներկայացնելով ձեր տոնական հագուստով:

ԳՈՎԱԶԴ

Մարքեթինգային հաղորդակցության ուղղվածություն, որի շրջանակներում իրականացվում է տեղեկույթի տարածում գովազդվող օբյեկտի նկատմամբ ուշադրություն գրավելու, հետաքրքրություն ստեղծելու կամ պահպանելու նպատակով:

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Համարվում է, որ գովազդը մարդկային հասարակության մեջ ի հայտ է եկել առևտրի հետ միաժամանակ: Նախապատմական ժամանակաշրջաններում դրա գոյությունը հաստատվում է, օրինակ՝ եգիպտական պապիրուսների վրա ստրուկների վաճառքի մասին հայտարարություններով: Այդ ժամանակներում գովազդը ներկայացվում էր գրավոր կամ բանավոր հայտարարությունների տեսքով, որոնցում գովաբանվում էին որոշակի ապրանքներ կամ ծառայություններ: Բանավոր գովազդը տարածվել է գնորդներին կանչող տարբեր մարդկանց կողմից, իսկ գրավոր գովազդը՝ պապիրուսների, մոմե տախտակների, քարերի և շինությունների վրայի գրությունների միջոցով:

Գովազդը մեծ տարածում ստացավ զանգվածային հաղորդակցության դարաշրջանում: Դրանում մեծ դեր ունեցավ տպագրության զարգացումը: Առաջին գովազդային գործակալությունը ստեղծել է 1842 թվականին ԱՄՆ-ում:

Գովազդի տարածմանը նպաստող մեկ այլ հանգամանք էր 19-րդ դարի կեսերին լուսանկարչության ստեղծումը և զարգացումը: Լուսանկարը հանդիսանում էր գովազդվող արտադրանքի առավելությունների անհերքելի ապացույց: Սակայն համաշխարհային գովազդային բիզնեսում էական փոփոխությունների ժամանակաշրջան է համարվում 20-րդ դարը, քանի որ հենց այդ ժամանակ գովազդի կազմակերպման և տեխնոլոգիաների ոլորտում տեղի ունեցան կտրուկ փոփոխություններ: 20-րդ դարում գովազդը դարձավ զանգվածային ի շնորհիվ համաշխարհային արդյունաբերական արտադրության զարգացման, ինչպես նաև գովազդի ստեղծման և տարածման ավելի կատարյալ միջոցների՝ պոլիգրաֆիայի, անալոգային և թվային ռադիոյի, թվային հեռուստատեսության, արբանյակային կապի, համակարգիչների և համացանցի: Հետ չմնալով գիտատեխնիկական առաջընթացի տեմպերից՝ գովազդը աստիճանաբար դառնում է ավելի կատարյալ և որակյալ:

ԳՈՎԱԶԴԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

Գովազդն իրականացնում է վեց հիմնական գործառույթ[8].

- ապրանքների և բրենդների վերաբերյալ հանրության իրազեկվածության բարձրացում,
- ապրանքի իմիջի ձևավորում,
- մարդկանց համոզում ձեռք բերելու ապրանքը,
- արտադրանքի նկատմամբ պահանջարկի խթանում,
- ապրանքը ձեռք բերելու անհրաժեշտության գիտակցման ձևավորում,
- գնումների նախկին փորձի ամրապնդում:

ԳՈՎԱԶԴԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

- տնտեսական (շահույթի ձեռքբերում),
- սոցիալական (հասարակայնորեն նշանակալի նպատակների իրականացում),
- քաղաքական (հանրությանը ղեկավարելու համակարգի օրինապահության ձևավորում),
- գաղափարական (անձի աշխարհայացքի ձևավորում և զարգացում),

- հոգեբանական (ներգործություն գնորդի ցանկությունների և երազանքների վրա),
- կրթական (կյանքի տարբեր ոլորտների վերաբերյալ ինֆորմացիայի ստացում),
- գեղագիտական (մշակութային) - շատ գովազդներում ընտրվում են բարձրաճաշակ գույներ, երաժշտություն, ինչը դրական է անդրադառնում դիտողի վրա:

ԳՈՎԱԶԴԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

- Առևտրային (տնտեսական) գովազդի նպատակը հանդիսանում է (հավանական) գնորդը, ում առաջարկելով ապրանքը՝ կարելի է ստանալ շահույթ:
- Սոցիալական գովազդ, որը դուրս է տնտեսական խնդիրների դաշտից և ուղղված է դեպի բարեգործական կամ հասարակայնորեն օգտակար այլ նպատակների իրականացմանը, այդ թվում՝ բնակչության շրջանում առողջ ապրելակերպի կարևորմանը, բնակչության անպաշտպան շերտերի պաշտպանությանը, շրջակա միջավայրի աղտոտման դեմ պայքարին: Այլ կերպ ասած՝ սոցիալական գովազդը նպատակ ունի օգնել մարդկանց, մասնավորապես՝ երեխաներին:
- Քաղաքական (նաև նախընտրական) գովազդը հանդես է գալիս որպես ընտրողների ձայնը շահելու միջոց:

Կան նաև գովազդի յուրահատուկ տեսակներ.

- Կոնտրգովազդ, որը հերքում է անբարեխիղճ գովազդը:
- Հակագովազդ, որը կոչված է ոչ թե բարձրացնել, այլ նվազեցնել ինչ-որ ապրանքի նկատմամբ մարդկանց հետաքրքրությունը կամ որակազրկել որոշ ապրանքներ, ապրանքանիշներ:

ԳՈՎԱԶԴ ԶԼՄ-ՆԵՐՈՎ

Գովազդի առավել տարածված և ավանդական տեսակը համարվում է ԶԼՄ-ներով տարածվող գովազդը.

- հեռուստատեսային (տեսահոլովակ գովազդային բլոգում, գովազդային դադար, հաղորդագրություն վազող տողում, հեռուստատեսային հայտարարություն), վիրտուալ գովազդ,
- ռադիոգովազդ,
- տպագիր (կարող է լինել մամուլում կամ այլ տեսքով՝ թերթիկներ, կպչուն թղթեր, այցեքարտեր),
- համացանցային գովազդ:

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ

Այն տեղակայվում է բաց տարածությունում գտնվող հատուկ ժամանակավոր և/կամ մշտական կառույցների վրա, ինչպես նաև շինությունների արտաքին մակերեսներին, փողոցային սարքավորումների, մայթերի վրա, ավտոլցակայաններում:

Արտաքին գովազդը կարող է տեղադրվել ինչպես փողոցում, այնպես էլ տրանսպորտի տարբեր տեսակների վրա:

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴԻ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հասարակության մեծ բազմության ընդգրկումը: Եթե գովազդը պատրաստված է որակով, ճաշակով և յուրօրինակ, նա անպայման կգտնի իր սպառողին:

Բազմակի հանդիպումը: Դա նշանակում է, որ մեծամասնությունը տեսնում են արտաքին գովազդը ոչ թէ մեկ, այլ մի քանի անգամ: Դա հանդիսանում է որպես դրական կողմ, քանի որ արտաքին գովազդի հաճախակի հանդիպումը ազդում է ենթագիտակցության վրա:

Ներդաշնակ համադրություն գովազդի մյուս տեսակների հետ: Համակցված գովազդային արշավի դեպքում արտաքին գովազդի արդյունավետությունը մի քանի անգամ մեծանում է:

Միջին խավը ներգրավելու հնարավորությունը: Կազմակերպությունների գերակշռող մասի համար հասարակության ամենացանկալի մասն են կազմում 25-60 տարեկան աշխատող մարդիկ, որոնք ժամանակ չունեն հեռուստացույց դիտելու կամ ամսագիր կարդալու, սակայն քաղաքում այդ մարդիկ բավականին ժամանակ են անցենկացնում մեքենայի ղեկին կամ տրանսպորտում, ուստի առնչվում են արտաքին գովազդի հետ:

Ոչ նյարդայինացնող: Եթե գովազդը՝ հեռուստատեսությամբ առաջացնում է հստակ ցանկություն անջատել ձայնը, ռադիոյով՝ միացնել նվագարկիչը, ամսագրում՝ թերթել էջը, ապա փողոցում այդ խնդիրը չի ծագում: Արտաքին գովազդը չի նյարդայինացնում, նույնիսկ հակառակը երբեմն նա էսթետիկական հաճույք է պատճառում և ծառայում է որպես զարդ քաղաքին:

ՆԵՐՔԻՆ ԳՈՎԱԶԴ

Ներքին գովազդը տեղադրվում է հաստատությունների ներսում, մասնավորապես առևտրի կենտրոններում, օդանավակայաններում, կայարաններում, կինոթատրոններում, բիզնես կենտրոններում, մուտքերում, վերելակներում, սպորտի և ժամանցի վայրերում, կրթական և բժշկական հաստատություններում և այլ վայրերում:

ԳՈՎԱԶԴԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Ներկայումս գովազդի զարգացումը հանգեցրել է նրան, որ գովազդային գործունեությունը վերափոխվել է սոցիալական յուրահատուկ ինստիտուտի, որը գովազդային ծառայությունների միջոցով ապահովում է հանրային պահանջմունքը: Այդ ինստիտուտի արտադրական հիմքը կազմում է գործունեությունների համալիրը, որն ընդունված է անվանել «գովազդային արդյունաբերություն»: Այդ հասկացությունն ի հայտ է եկել ժամանակակից տնտեսագիտության մեջ՝ պայմանավորված գովազդային գործունեության՝ զանգվածային բնույթով: Գովազդային գործունեության պլանաչափ իրականացումը, գովազդային շուկայի սուբյեկտների և տնտեսության տարբեր բաժինների համակարգային փոխգործունեությունը, գովազդային արտադրանքներ ստեղծող ընկերությունների առկայությունը թույլ են տալիս առաջ քաշել այն միտքը, որ գովազդային գործունեությունը ձեռք է բերել արդյունաբերական հատկանիշներ:

Գովազդում անխուսափելիորեն բախվում են տարատեսակ ֆինանսական և քաղաքական շահեր: Գնորդը ձգտում է հասնել գովազդների քանակի նվազեցմանը, իսկ գովազդատուն, ընդհակառակը, ձգտում է ոչ միայն ընդլայնել գովազդի քանակը, այլև մեծացնել լսարանը: Հնարավոր են նաև փոխզիջումային տարբերակներ:

Հանրության հետաքրքրությունները, ընդհանուր առմամբ, պահանջում են սպառողին հեռու պահել կեղծ և ոչ հավաստի գովազդից: Միաժամանակ այդ նույն հետաքրքրությունները թելա-

դրում են խթանել վաճառքը, որի հիմնական միջոցը համարվում է գովազդը: Այդ շահերի հակասությունը պահանջում է խնդրի մանրամասն վերլուծություն և կարգավորում: Գովազդային օրենսդրությունը բոլոր երկրներում ուղղված է վերոնշյալ հետաքրքրությունների փոխզիջմանը:

Սովորաբար գովազդը սահմանափակվում է ըստ ներկայացման ծավալի, միջոցի, վայրի և ժամանակի, արգելք է դրվում կեղծ, ոչ հավաստի, էթիկապես անընդունելի, ոչ պատշաճ գովազդի վրա: Երբեմն գովազդ արտադրողների և տարածողների գործունեությունը լիցենզավորվում է:

Շատ երկրներում օրենսդրությունն արգելում է առանձին ապրանքների (ալկոհոլային խմիչքներ, ծխախոտ) գովազդը առանց այն գրության նախազգուշացման, որ տվյալ ապրանքները վնասակար են առողջության համար:

ԹԱՔՆՎԱԾ ԳՈՎԱԶԴ

Թաքնված է համարվում այն գովազդը, որը չի նշվում որպես այդպիսին, տեղադրվում է տեղեկատվական, խմբագրական կամ հեղինակային նյութի տեսքով, պարունակում է սպամ կամ այլ ոչ գովազդային տեղեկատվություն: Լայն տարածում ունի թաքնված գովազդի տեխնոլոգիան, որը ներգործում է ենթագիտակցական մակարդակում (25-րդ կադր և այլ տարբերակներ):

Շատ երկրներում թաքնված գովազդը արգելված է, սակայն դրա սահմանումը բարդ է, և պատժի պրակտիկան հայտնի չէ:

Լինելով ամբողջական մարքեթինգային հաղորդակցության բաղադրիչ՝ գովազդը նպաստում է ժամանակակից տեխնոլոգիաների զարգացմանը, տեխնոլոգիական առաջընթացին, նպաստում գովազդվող արտադրանքի պահանջարկի բարձրացմանը՝ այդ կերպ խթանելով տնտեսական աճը, ձեռնարկատիրական ակտիվությունը և բարձրացնելով կենսամակարդակը:

ՀՐԱՇԱԼԻ ԳԱՂԱՓԱՐՆԵՐ, ՈՐՈՆՔ ԳՈՎԱԶԴԸ ՎԵՐԱԾԵԼ ԵՆ ԳԼՈՒԽԳՈՐԾՈՑԻ

Աշխարհի բոլոր երկրներում բրենդները փորձում են կիրառել ոչ ստանդարտ մոտեցումներ և ստեղծել որքան հնարավոր է ինքնատիպ ու կրեատիվ գովազդներ: Եվ պետք է ասել, որ շատ դեպքերում դա նրանց հրաշալի հաջողվում է:

Արտաքին գովազդի անչափ հետաքրքիր օրինակներ, որոնց ուշադրություն չդարձնելը ու դրանք արժանիորեն չգնահատելը պարզապես անհնար է:

IWC ժամացույցի բրենդի գովազդը ավտոբուսների բռնակների վրա:

Մազերի ներկ Wella-ից

Oktoberfest փառատոնի պատվին գարեջրի գավաթներ փողոցի սյուների վրա:

Փոքրիկ, բայց շատ տարողունակ Honda Fit-ը

Play-Doh ծեփամածիկը զարգացնում է երեխաների տրամաբանությունը:



WMF դանակներն ավելի սուր են, քան կարող եք պատկերացնել:

Պարզ տեսողություն Keloptic ակնոցների օնլայն-խանութից

Շունը կյանքն ավելի լավն է դարձնում. Pedigree կերերի գովազդը

Կոկիկ կայանում Volkswagen-ի հետ

Panasonic օդափոխիչի հետ օդն ավելի թարմ է, քան փողոցում

Առաջադրանքներ

1. Աշխատե՛ք խմբերով: Ընտրե՛ք գովազդի թեմա, ներկայացրե՛ք կարգախոսը:
2. Օգտվելով տարբեր աղբյուրներից, գտե՛ք ձեր կարծիքով լավագույն գովազդի օրինակ:
3" Ձեր շրջապատում գտե՛ք արտաքին գովազդի տարբերակ, որը չի համապատասխանում ձեր պատկերացումներին:

ԱՐՎԵՍՏԸ ԵՎ ՄԻՋԱՎԱՅՐԸ

Արվեստ և իրականություն

Մենք ընկալում ենք մեր շրջապատը մեր զգայարանների, զգացմունքների և ներքին պատկերացումների ու համոզումների հիման վրա, որոնք կարող են տարբեր հանգամանքներից ելնելով լինել օբյեկտիվ կամ սուբյեկտիվ: Իրականության և ճշմարտության վերաբերյալ պատկերացումները միահյուսվում են ստեղծագործական ու երևակայական պատկերացումների հետ:

Իրականությունը նաև ժամանակն է, կամ իրականությունը ժամանակի մեջ է՝ այսինքն իրականությունը փոփոխական է, քանի որ ժամանակը, ինքնին փոփոխական է և դինամիկ: Մեր մտքերը, զգայարանները և ընկալումներն են կենսունակ և ժամանակի հետ փոփոխվող ու դինամիկ: Ուրեմն՝ որտե՞ղ է ճշմարտությունը և ի՞նչ է իրականությունը արվեստում:

Արվեստ և միջավայր

Արվեստն առաջին հերթին հասարակական երևույթ է և դժվար է պատկերացնել մարդկության պատմության առաջընթացն առանց մշակույթի:

Եթե արվեստը մարդու ստեղծագործական գործունեության արդյունք է, ապա մարդկության պատմության մեջ առկա է նաև մարդու ավերիչ գործունեությունը, օրինակ՝ պատերազմները, որոնք մշակույթի կործանման պատճառ են դառնում:

Արվեստը, հաճախ ստեղծվում է միջավայրի պահանջմունքները բավարարելու անհրաժեշտությունից: Հասարակությունը կարիք է զգում հոգևոր արժեքների, արվեստի ստեղծագործությունների ստեղծման և փոխանցման, որոնք մարդու գործունեության ձևերից դուրս գոյատել չեն կարող, հետևաբար հասարակությունը արժեքների ստեղծմանը տալիս է կարևորություն և շարունակական բնույթ: Անհատի գեղարվեստական պահանջմունքների զարգացումը կարող է խթանել արժեքների փոփոխմանը, նորացմանը, նույնիսկ՝ փոխարինմանը: Կապված հասարակության և միջավայրի կայունության աստիճանից, արվեստը և դրա արտահայտման ձևերը կարող են լինել տարբեր:

Հնարավոր են երեք տիպական իրավիճակներ

1" Եթե միջավայրը պատրաստ չէ նոր արվեստին, ապա վերջինս կարող է առաջադրել արժեքներ, որոնք մերժվեն հասարակության կողմից: Երբ միջավայրը պարտադրում է արժեքներ, որոնք պետք է պարտադիր լինեն բոլորի համար, ապա անբարենպաստ դաշտ է ստեղծվում անհատի զարգացման համար:

2. Երբ միջավայրը քաղաքական ու սոցիալական ծանր իրավիճակներում լճանում է, և արվեստը չի հասցնում նորացնել ու թարմացնել իր նորմերն ու արժեքները:

3. Երբ գոյություն ունի միջավայրի և արվեստի միաժամանակյա ու համամասնական փոփոխություն: Այս պայմաններում անհատի զարգացումը ևս ընթանում է անհակասական ու համեմատական: Արվեստի ստեղծագործությունը անհատի կողմից դառնում է ճիշտ ընկալելի:

Այսպիսով, մշակույթի ժառանգորդման ցանկացած խախտում բացասաբար է անդրադառնում մարդու և հասարակության զարգացման վրա, և արվեստը սկսում է արտացոլել միջավայրի շունչը:

Միևնույն ժամանակ արվեստը շատ զգայուն է հասարակական փոփոխությունների նկատմամբ, որոնք տեղի են ունենում տեխնիկական, սոցիալական, քաղաքական բնագավառներում:

Առաջադրանք

1"Քննարկե՛ք, ո՞ր աշխատանքներում է իրականությունը ներկայացված ճշմարտացի:
2" Աշխատե՛ք խմբերով: Նշե՛ք աշխատանքները, ըստ երեք տիպական իրավիճակների

1.

2.

3.

ԱՐՎԵՍՏ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Արվեստը հասարակության գիտակցության ձևերից մեկն է: Նրա հիմքը կազմում է իրականության գեղարվեստական-պատկերավոր արտացոլումը: Արվեստն օգնում է ճանաչել աշխարհը, ձևավորում է մարդկանց հոգևոր նկարագիրը, նրանց զգացմունքներն ու մտքերը, նրանց աշխարհայացքը, դաստիարակում է մարդուն, ընդլայնում է նրա մտահորիզոնը, արթնացնում ստեղծագործական ընդունակությունները: Սկզբնավորվելով մարդու աշխատանքային գործունեությամբ՝ արվեստն սկսեց բարենպաստորեն ազդել նրա զարգացման վրա, առանձնապես նրա գեղագիտական պատկերացումների ընդարձակման վրա: Արվեստի ճանաչողական դերը նրան մերձեցնում է գիտության հետ: Նկարիչը, ինչպես և գիտնականը, ձգտում է ըմբռնել կենսական երևույթների իմաստը, պատահականի, անցողիկի մեջ բացահայտել առավել բնորոշը և տիպականը: Ի տարբերություն գիտության, արվեստը շրջապատի աշխարհի մասին իր պատկերացումներն արտահայտում է ոչ թե վերացական հասկացություններով, այլ կոնկրետ գեղարվեստական կերպարներով: Կյանքում տիպականը մարմնավորվում է գեղարվեստական ստեղծագործություններում, անկրկնելի անհատական-բնութագրական ձևերում: Մարդկության զարգացման գործում արվեստին գործուն-ակտիվ դեր է պատկանում՝ տալիս է իրականության գեղագիտական գնահատականը՝ բացահայտելով կյանքի **այլանդակ կողմերը**, վճռական խոսք ասելով դրանց վերաբերյալ, կոչ է անում **կրքոտությամբ մերժել**, **պայքարել** դրանց դեմ: Մարմնավորելով **գեղեցիկի իդեալը**, հասնելով բարձր բանաստեղծականության, **կյանքի ճշմարտությանը**, արվեստը մարդուն **ոգեշնչում** է սխրագործության, նրան պայքարի կոչում հանուն մարդկության լուսավոր ապագայի:

Արվեստի ներգործուն դերն առանձնապես աճել է մեր դարաշրջանում: Այն չի կարելի ըմբռնել հասարակական կյանքի մյուս երևույթների, գաղափարախոսության մյուս ձևերի հետ նրա փոխհարաբերություններից դուրս: Յուրաքանչյուր դարաշրջանի արվեստն անխզելիորեն կապված է ազգային մշակութի և պատմական պայմանների, հասարակության հոգևոր կյանքի մակարդակի հետ: **Իրական աշխարհի արտացոլումը, գեղարվեստական վերարտադրության համար իրականության այս կամ այն երևույթի ընտրությունը որոշվում են նկարչի աշխարհայացքով, կատարվում են որոշակի իդեալների տեսանկյունով**:

Հասարակության մեջ հետադիմական տարրերի ներգործությունը սահմանափակության իր կնիքն է դնում շատ նկարիչների ստեղծագործության վրա: Նկարչի կողմից մարդու իսկական շահերի արտահայտումը, կյանքի բարեփոխման գործին անձնազոհությամբ ծառայելու նրա պատրաստակամությունն ընդլայնում են նրա ստեղծագործական մտահորիզոնը, արվեստի կերպարներում հասարակության առաջադիմական ձգտումների գեղագիտական մարմնավորման նրա ընդունակությունը: Այդպիսի նկարիչների ստեղծագործությունները բարձրակետեր են դառնում համաշխարհային արվեստի պատմության մեջ:

Արվեստի պատմությունը փոխադարձ ներգործության, պայքարի մեջ մտած տարբեր ազգային դպրոցների, ոճերի, ուղղությունների, ստեղծագործող անձնավորությունների զարգացման բարդ, հակասական պատկեր է ներկայացնում: Իրենց ստեղծագործություններում նկարիչները ելնում են ոչ միայն անմիջական տպավորություններից, դիտարկումներից և շրջապատի կյանքի ուսումնասիրությունից, այլև արվեստի ոլորտում մարդկության կողմից դարերի ընթացքում կուտակված փորձից, նկարիչները մերթ հենվում են ազգային դպրոցների ավանդույթների վրա, մերթ դրանց հակադրում են իրականության երևույթների իրենց նոր ըմբռնումը:

Արվեստի առաջադիմությունն առավել ուժեղ և ամենից ավելի ցայտուն ձևերով դրսևորվում է յուրաքանչյուր դարաշրջանի մարդասիրական և իրատեսական միտումներում ու նվաճումներում:

Եվ դա օրինաչափ է, որովհետև իրատեսությունն այն գեղարվեստական մեթոդն է, որն ամենից ավելի է համապատասխանում արվեստի ճանաչողական էությանը: Իրատեսությանը բնորոշ է կյանքում տիպականը, օրինաչափը վառ անհատական կերպարներում մարմնավորելու միտումը: Այնտեղ, որտեղ նկարիչը չի կարողացել հասնել ընդհանրացման ներդաշնակ միասնության և գեղարվեստական կերպարի անհատականացման, երևան են գալիս սխեմատիզմի գծեր, որոնք գեղարվեստական ստեղծագործությունը զրկում են կենսական լիարժեքուևությունից և համոզվածությունից:

Իրատեսությունն արվեստում պատմական հասկացություն է: Իրատեսական արվեստը տարբեր պատմական փուլերում տարբեր բովանդակություն ու ձև է ստացել՝ մարդկության գեղարվեստական մշակույթը հարստացնելով նոր նվաճումներով, որոնք պայմանավորված էին տվյալ դարաշրջանի հասարակության նյութական կյանքի կոնկրետ բնույթով, իրականության ճանաչման յուրահատկությամբ, նրա նկատմամբ դրսևորվող վերաբերմունքով: Յուրաքանչյուր դարաշրջանում կյանքի որոշ կողմեր բացահայտվում էին ավելի ամբողջական, ավելի խորը, որոշ կողմեր էլ կա՛մ դուրս էին մնում մարդու տեսադաշտից, կա՛մ ավելի աղոտ կերպով էին արտացոլվում: Այսպես, նախնադարյան հասարակության նկարիչը կենսական համոզվածությամբ պատկերում էր կենդանական աշխարհը: Բայց բնության և հասարակական կյանքի տարբեր երևույթները, որոնց դիմում էր արվեստը հետագայում, նրա աշխարհընկալման շրջանակից դուրս էին մնում, որովհետև նախնադարյան մարդու աշխատանքում աշխարհի իրական ըմբռնումը մեծ չէր: Իրատեսությունն անցնում է զարգացման մի շարք որակապես առանձնահատուկ աստիճաններ, որոնցում հակասական և բարդ ձևով է երևան գալիս մարդու գեղարվեստական ձևավորումը: Այդ աստիճանները որոշվում են ինչպես պատկերման հիմնական առարկայի՝ հասարակական նոր հարաբերությունների, նոր կացութաձևի, մարդու տիպի փոփոխմամբ, այնպես էլ **հասարակական գիտակցության նոր մակարդակի** մարմնավորմամբ, կյանքի և նրա իդեալների մասին պատկերացումների բնույթի տարբերությամբ:

Հասարակական զարգացման վաղ աստիճաններում կյանքի արտացոլումն արվեստում ձևավորվում է առանց աշխարհը դեռևս բավականաչափ տիրապետելու, տարերայնորեն և մեծ մասամբ կերպավորվում է երևակայական (ֆանտաստիկական) դիցաբանական ձևերով՝ ծնունդ առնելով կյանքի պարզամիտ-դիցաբանական ընկալումից (նախնադարյան հասարակության արվեստ, հին աշխարհի և միջին դարերի արվեստ): Աշխարհի, նրա օրինաչափությունների ճանաչման նկատմամբ գիտակցական նպատակադրվածությունը, իրատեսության՝ որպես արվեստում ծրագրայնորեն գիտակցված որոշակի մեթոդի ձևավորում՝ վերաբերում են Վերածնության դարաշրջանին, երբ արվեստը, ինչպես և գիտությունը, ազատվում է սխոլաստիկայի գերությունից, տիրապետում է մարդու կերպարի, նրա աշխարհայեցողության և հասարակական հարաբերությունների ճշմարտացի պատկերմանը: Սկսած Վերածնունդի դարաշրջանից և վերջացրած XVIII-XIX դարերի սահմանագծով, տեղի է ունենում դիցաբանական իրատեսության քայքայման գործընթաց և այն իրատեսության հաստատումը, որևտեղ գլխավորը դառնում է սոցիալական կյանքի անմիջական պատկերումը:

XIX դարի ժողովրդավարական (դեմոկրատական) իրատեսությունը զարգանում էր սոցիալական հակասությունների պայմաններում: Այն վերջնականապես ազատվում է դիցաբանության հետ ունեցած կապից, աշխարհընկալման նրա ձևերից, ավելի խորն է թափանցում ժամանակակից կյանքի, նրա հակասական երևույթների Էության մեջ, ավելի լայնորեն է ընդգրկում դրանք, բացահայտելով իրականության այնպիսի կողմեր, ինչպիսիք նախորդ դարաշրջաններից ոչ մեկին մատչելի չէին:

Հասարակական հակասությունների խորացումով արվեստը դառնում է հիմնականում քննադատական, հասարակության արատները մերկացնող ու բացահայտող, ժողովրդավարական, մարդասիրական իդեալներ հաստատող իրատեսություն: Քննադատական իրատեսությունն, իր գիտակցված գաղափարական ծրագրով, իր հուզական գեղարվեստական լեզվով, դառնում է մարտական ժողովրդավարական մշակույթի արտահայտիչ:




Ὁ Ὤν
ΙΣ
ΧΣ









Առաջադրանքներ

1. *Քննարկե՛ք ներկայացված նյութը:*
2. *Դիտե՛ք դիմանկարները և փորձե՛ք մեկնաբանել:*
   - *Ի՞նչ եք տեսնում:*
   - *Ի՞նչ նյութեր է օգտագործել նկարիչը:*
   - *Ի՞նչ է ուզում ասել նկարիչը:*
   - *Ո՞վ է պատկերված, ձեր կարծիքով:*
   - *Ո՞ր ժամանակաշրջանն է պատկերված:*
   - *Պատկերված անձն իրակա՞ն է, թե՝ ոչ:*
3. *Աշխատանքներում փորձե՛ք ցույց տալ հավասարակշռությունը, ռիթմը, գիծը, մակերեսը, ծավալը, հակադրությունը, ազդեցությունը:*
4. *Ձեր կարծիքով, ո՞ր աշխատանքն է արվեստի ստեղծագործություն:*
5. *Դիմանկարներից, ո՞ր աշխատանքներն են թանգարանային, և որո՞նք կարելի է պահել տանը:*